



ԿԱՅՈՒՆ
ԿԱՅՈՒՆ
ՉԱՐԳԱՑՄԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ



ԵՐԵՎԱՆ
2016



Աշխատանքը պատրաստված է

«Բնապահպանական կառավարման հզորացում ոչ-կառավարական

կազմակերպությունների կարողությունների զարգացման միջոցով» ծրագրի շրջանակներում՝

«Հետ Ռիո+20» գործընթացի շրջանակներում կառավարական կառույցների

ու ոչ-կառավարական հատվածի միջև երկխոսության

հնարավորությունների ստեղծում Հայաստանում» խորագրով նախագծի ընթացքում,

որը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից,

իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի կողմից

ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի միջոցով:

Նախագծի իրականացնողը՝ «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիան/UNEP/NatCom

իր երախտագիտությունն է հայտնում հովանավորներին՝ ցուցաբերված աջակցության համար:



«ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ»
ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՆԱԽԱԲԱՆ

«Հանուն մարդկային կայուն զարգացման» ասոցիացիան/UNEPNatCom ակտիվորեն մասնակցում է ժամանակակից քաղաքակրթությունից կայուն զարգացման փոխակերպման գործընթացին բոլոր մակարդակներում՝ տեղական, պետական, տարածաշրջանային, համաշխարհային:

Հատուկ նշանակություն ենք տալիս բնակչության տեղեկացվածության բարձրացմանը և, հատկապես, այն անձանց, որոնք որոշումներ են կայացնում կայուն զարգացման գաղափարախոսության ու սկզբունքների և դեպի կայուն զարգացման անցման անհրաժեշտության վերաբերյալ:

Այս նպատակով ՄԱԿ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» տասնամյակի շրջանակներում պատրաստվել և հրատարակվել են բուհերի համար երեք ուսումնական ձեռնարկ՝ 1996 թ., 2006 թ. և 2013 թ., որոնցում նշանակալի չափով արտահայտված են ՄԱԿ-ի «Երկիր մոլորակ» հիմնարար գազաթնաժողովի, 2002 թ. Յոհանեսբուրգում կայացած «Ռիո+10» և 2012 թ. Ռիո-դե-Շանեյրոյում կայացած «Ռիո+20» կայուն զարգացման գազաթնաժողովների եզրափակիչ փաստաթղթերը: Դրանցից շատերը մեր կողմից հրատարակվել են առանձին հրապարակումների տեսքով և լայնորեն տարածվել:

Բացառիկ կարևոր ենք համարում 2015 թ. սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովի 70-րդ հոբելյանական նստաշրջանի կողմից ընդունված բանաձևը «Վերափոխենք մեր աշխարհը. Մինչև 2030 թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի վերաբերյալ, որտեղ ներառված են կայուն զարգացման հիմնարար նպատակներն ու խնդիրները: Հաշվի առնելով, որ ներկայում բոլոր երկրները՝ ներառյալ Հայաստանի Հանրապետությունը, պետք է մասնակցեն այդ նպատակների մշակմանն ու իրականացմանը, մենք ենթադրում ենք, որ տվյալ փաստաթղթի հրատարակումը հասարակության համար առավել մատչելի լեզուներով (ոուսերեն տեքստն ամբողջությամբ և նպատակներն ու ցուցանիշները հայերեն թարգմանությամբ) կնպաստի տվյալ գործընթացի ավելի բարեհաջող իրագործմանը:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ,

«Հանուն ԿՄՁ» ասոցիացիայի/UNEPNatCom նախագահ,
ՀՀ ԿԶԱԽ քարտուղար, ՀՊՄՀ Էկոլոգիայի և կայուն
զարգացման ամբիոնի վարիչ, աշխ. գիտ. դոկտ., պրոֆ.

Ասոցիացիան իր երախտագիտությունն է հայտնում ԵՄ-ին, ԳԷՀ-ին և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրին ֆինանսական աջակցության, ինչպես նաև ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության երևանյան գրասենյակին՝ հայերեն տեքստի տրամադրման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ IV:

**ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՑԱՆԿ**

*Կայուն զարգացման նպատակների ցուցանիշները պետք է
համապատասխան դեպքերում տարանջատվեն
ըստ եկամտի, սեռի, տարիքի, ռասայի, էթնիկ ծագման,
միգրացիոն կարգավիճակի, հաշմանդամություն ունենալու հանգամանքի
և աշխարհագրական դիրքի կամ այլ բնութագրերի՝
համաձայն «Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներ»-ի
(Ընդհանուր վեհաժողովի թիվ 68/261 բանաձև):*

* *Ծանոթագրություն.* Սույն Հավելված IV-ը պարունակում է Կայուն զարգացման նպատակների վերանայված ու վերջնականացված ցուցանիշները, որոնք արդյունքն են լրացուցիչ քննարկումների, ինչպես նշված էր առաջնային փաստաթղթում: Որպես կատարված աշխատանքի արդյունք այս հավելվածում ոչ մի ցուցանիշ աստղանշված չէ:

<p align="center">ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐ («Օրակարգ 2030»-ից)</p>	<p align="center">ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ</p>
<p align="center">Նպատակ 1. Ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով</p>	
<p>1.1 Մինչև 2030 թ. ամենուրեք և բոլոր մարդկանց համար իսպառ վերացնել ծայրահեղ աղքատությունը, որը ներկայումս չափվում է որպես օրական 1,25 դոլարից պակաս սպառում</p>	<p>1.1.1 Աղքատության միջազգային շեմից ցած ապրող բնակչության մասնաբաժինը՝ ըստ սեռի, տարիքի, զբաղվածության կարգավիճակի և աշխարհագրական վայրի (քաղաքային/գյուղական)</p>
<p>1.2 Մինչև 2030 թ. առնվազն կիսով չափ կրճատել ըստ ազգային սահմանումների աղքատության բոլոր ձևերի մեջ ապրող բոլոր տարիքների տղամարդկանց, կանանց և երեխաների համամասնությունը</p>	<p>1.2.1 Աղքատության ազգային շեմից ցած ապրող բնակչության մասնաբաժինը՝ ըստ սեռի և տարիքի 1.2.2 Ըստ ազգային սահմանումների աղքատության բոլոր ձևերի մեջ ապրող բոլոր տարիքների տղամարդկանց, կանանց և երեխաների համամասնությունը</p>
<p>1.3 Ներդնել տվյալ երկրում համապատասխան սոցիալական պաշտպանության համակարգեր և միջոցառումներ բոլորի համար, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության երաշխիքների խմբեր, և մինչև 2030 թ. հասնել աղքատների և խոցելիների էական չափերով ընդգրկմանը</p>	<p>1.3.1 Սոցիալական պաշտպանության երաշխիքների խմբերում և (կամ) համակարգերում ընդգրկված բնակչության համամասնությունը՝ ըստ սեռի, և առանձնացնելով երեխաներին, գործազուրկ անձանց, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց, հղի կանանց և (կամ) նորածիններին, աշխատանքի վայրում վնասվածք ստացածներին, աղքատներին և խոցելիներին</p>
<p>1.4 Մինչև 2030 թ. ապահովել, որ բոլոր տղամարդիկ և կանայք, մասնավորապես աղքատները և խոցելիները, ունենան հավասար իրավունքներ տնտեսական ռեսուրսների նկատմամբ, ինչպես նաև հիմնական ծառայությունների հասանելիություն, հողի և գույքի այլ ձևերի նկատմամբ սեփականության և վերահսկողության, ժառանգությունից և բնական պաշարներից, նոր համապատասխան տեխնոլոգիաներից և ֆինանսական ծառայություններից, այդ թվում՝ միկրոֆինանսներից օգտվելու իրավունքներ</p>	<p>1.4.1 Հիմնական ծառայությունների հասանելիություն ունեցող տնային տնտեսություններում ապրող բնակչության համամասնությունը 1.4.2. Հողի զբաղեցման ապահով իրավունք ունեցող չափահաս բնակչության ամբողջական թիվը՝ ըստ սեռի ու զբաղեցման իրավունքի տեսակի, իրավական փաստաթղթերով և ովքեր կարող են վկայել իրենց իրավունքի ապահով լինելու մասին</p>

<p>1.5 Մինչև 2030 թ. ստեղծել աղքատների և խոցելի իրավիճակներում հայտնված անձանց տոկոսությունը, նվազեցնել կլիմային առնչվող ծայրահեղ իրադարձությունների և այլ տնտեսական, սոցիալական և բնապահպանական ցնցումներին և աղետներին ենթարկվածության և դրանց նկատմամբ խոցելիության աստիճանը</p>	<p>1.5.1 Աղետների պատճառով մահվան դեպքերի, անհետ կորածների, տուժածների թիվը 100 հազար մարդու հաշվով</p> <p>1.5.2. Աղետների պատճառած տնտեսական ուղղակի վնասը կապված ՀՆԱ-ի հետ¹</p> <p>1.5.3. Աղետների ռիսկերի կրճատման վերաբերյալ ազգային ու տեղական ռազմավարություններ ունեցող երկրների քանակը¹</p>
<p>1.ա Ապահովել ռեսուրսների զգալի մոբիլիզացում տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ զարգացմանը միտված խորացված գործակցության միջոցով՝ զարգացող երկրներին, մասնավորապես առավել թույլ զարգացած երկրներին համարժեք և կանխատեսելի միջոցներ տրամադրելու համար, որպեսզի իրականացնեն ծրագրեր և ռազմավարություն՝ վերացնելու աղքատությունն իր բոլոր դրսևորումներով</p>	<p>1.ա.1 Աղքատության նվազեցման ծրագրերին կառավարության տրամադրած միջոցների համամասնությունը</p> <p>1.ա.2 Էական ծառայությունների (կրթություն, առողջապահություն և սոցիալական պաշտպանություն) վրա կատարված ծախսերը՝ արտահայտված որպես պետական ընդհանուր ծախսերի համամասնությունը</p>
<p>1.բ Ստեղծել զարգացման աղքատամետ և գենդերազգայուն ռազմավարությունների վրա հիմնված քաղաքականության ամուր շրջանակներ ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում՝ օժանդակելու աղքատության վերացման գործողություններում ներդրումների արագացմանը</p>	<p>1.բ.1 Կառարավության ներկա ու կապիտալ ծախսումների համամասնությունը, որոնցից անհամաչափորեն օգտվում են կանայք, աղքատներն ու խոցելի խմբերը</p>
<p>Նպատակ 2. Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը</p>	

¹ Ընդհանուր վեհաժողովի կողմից ստեղծված (բանաձև 69/284) աղետների ռիսկերի կրճատման վերաբերյալ ցուցանիշների ու եզրույթների միջկառավարական փորձագիտական աշխատանքային բաց խումբը մշակում է ցուցանիշների մի շարք չափելու Սենդայի շրջանակի կատարման գլոբալ առաջընթացը: Սույն հավելվածի ցուցանիշները վերջիվերջո արտացոլելու են Սենդայի շրջանակի համաձայնեցված ցուցանիշները:

<p>2.1 Մինչև 2030 թ. վերջ դնել սովին և ապահովել բոլոր մարդկանց, մասնավորապես աղքատների և խոցելի իրավիճակներում գտնվող անձանց, այդ թվում՝ մինչև մեկ տարեկան երեխաների համար անվտանգ, սննդարար և բավարար սննդի մատչելիությունը ողջ տարվա ընթացքում</p>	<p>2.1.1 Թերսնվածության տարածվածությունը 2.1.2 Չափավոր կամ սուր պարենային անապահովության տարածվածությունը բնակչության շրջանում՝ հիմնվելով Պարենային անապահովության գնահատման սանդղակի վրա</p>
<p>2.2 Մինչև 2030 թ. վերջ դնել թերսնվածության բոլոր ձևերին, այդ թվում՝ մինչև 2025 թ., հասնել մինչև 5 տարեկան երեխաների շրջանում թերաճության և սուր թերսնուցման միջազգայնորեն համաձայնեցված թիրախներին, բավարարել դեռահաս աղջիկների, հղիների և կրծքով կերակրող կանանց սնուցման կարիքները</p>	<p>2.2.1 Թերաճության տարածվածություն (տարիք-հասակային հարաբերակցության գործակցի <-2 ստանդարտ շեղում Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) երեխայի աճի չափորոշիչների միջնարժեքից (մեդիան) մինչև 5 տարեկան երեխաների շրջանում 2.2.2 Թերսնուցման տարածվածություն (քաշ-հասակային հարաբերակցության գործակցի >+2 կամ <-2 ստանդարտ շեղում ԱՀԿ երեխայի աճի չափորոշիչների միջնարժեքից (մեդիան) մինչև 5 տարեկան երեխաների շրջանում, տարանջատված ըստ տեսակի (սուր թերսնուցում և գերքաշություն)</p>
<p>2.3 Մինչև 2030 թ. կրկնապատկել փոքր պարենարտադրողների, մասնավորապես կանանց, տեղաբնիկ ժողովուրդների, ընտանեկան գյուղացիական տնտեսությունների, անասնապահների և ձկնորսների գյուղատնտեսական արտադրողականությունը և եկամուտները, այդ թվում՝ հողի, այլ արտադրական ռեսուրսների և ներդրումների, գիտելիքների, ֆինանսական ծառայությունների, արժեքի ավելացման և շուկաների հնարավորությունների և ոչ-գյուղատնտեսական զբաղվածության ապահով և հավասար հասանելիության միջոցով</p>	<p>2.3.1 Մեկ աշխատանքի միավորին ընկնող արտադրության ծավալը ըստ գյուղատնտեսական/անասնապահական/անտառտնտեսության ձեռնարկությունների չափի դասերի 2.3.2 Փոքրածավալ մթերք արտադրողների միջին եկամուտը՝ ըստ սեռի և տեղաբնիկ լինելու կարգավիճակի</p>

<p>2.4 Մինչև 2030 թ. ապահովել պարենարտադրության կայուն համակարգեր և ներդնել դիմակայուն գյուղատնտեսական գործելաձևեր, որոնք մեծացնում են արտադրողականությունը և արտադրությունը, օգնում են պահպանել էկոհամակարգերը, ուժեղացնում են կլիմայի փոփոխություններին, ծայրահեղ եղանակային պայմաններին, երաշտին, հեղեղներին և այլ աղետներին հարմարվելու կարողությունները և շարունակաբար բարելավում հողի որակը</p>	<p>2.4.1 Արդյունավետ ու կայուն գյուղատնտեսական գործելաձևեր կիրառող գյուղատնտեսական տարածքների համամասնությունը</p>
<p>2.5 Մինչև 2020 թ. պահպանել սերմերի, մշակաբույսերի, գյուղատնտեսական և ըն-</p>	
<p>տելացված կենդանիների և դրանց վայրի ազգակիցների գենետիկական բազմազանությունը, այդ թվում՝ անվտանգ կերպով կառավարվող և բազմազանեցված սերմերի և բույսերի բանկերի միջոցով ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում, իրանել գենետիկական պաշարների և առնչվող ավանդական գիտելիքներից ստացվող օգուտների հասանելիությունը և արդարացի ու հավասար բաշխումը՝ միջազգայնորեն համաձայնեցված կերպով</p>	<p>2.5.1 Բուսական ու կենդանական գենետիկական պաշարների քանակը մթերված պարենային ու գյուղատնտեսական միջնաժամկետ ու երկարաժամկետ պահուստային տարածքներում</p> <p>2.5.2 Տեղական մշակաբույսերի համամասնությունը, որ դասակարգված է որպես վտանգի ենթակա, վտանգի ոչ ենթակա կամ անհետացման անհայտ աստիճանի վտանգի ենթակա</p>
<p>2.ա Ավելացնել, այդ թվում՝ միջազգային խորացված համագործակցության միջոցով, ներդրումները գյուղական ենթակառուցվածքներում, գյուղատնտեսական հետազոտությունների և գյուղատնտեսության աջակցման ծառայություններում, տեխնոլոգիաների զարգացման ոլորտում, բույսերի և կենդանիների գենային բանկերում՝ զարգացող երկրներում, մասնավորապես առավել թույլ զարգացած երկրներում գյուղատնտեսական արտադրողականության բարձրացման նպատակով</p>	<p>2.ա.1 Պետական ծախսումների գյուղատնտեսական կողմնորոշման համաթիվը</p> <p>2.ա.2 Գյուղատնտեսությանն ուղղված պաշտոնական հոսքերի (զարգացմանն ուղղված պաշտոնական օգնությունն ու այլ պաշտոնական հոսքերը) ամբողջական գումարը</p>

<p>2.բ Շտկել և կանխել առևտրի սահմանափակումները և խաթարումները աշխարհի գյուղատնտեսական շուկաներում, այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի արտահանման սուբսիդիաների և համարժեք հետևանք ունեցող արտահանման բոլոր միջոցառումների բոլոր ձևերի զուգահեռ վերացման միջոցով՝ համաձայն Դոհայի զարգացման օրակարգի</p>	<p>2.բ.1 Արտադրողի օժանդակության նախահաշիվը</p> <p>2.բ.2 Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման սուբսիդիաներ</p>
<p>2.գ Հաստատել միջոցառումներ՝ ապահովելու պարենամթերքների շուկաների և դրանց ածանցյալների պատշաճ գործունեությունը և դյուրացնել շուկային, այդ թվում՝ պարենի պահուստներին վերաբերող տեղեկությունների ժամանակին հասանելիությունը՝ պարենի գների ծայրահեղ տատանումների սահմանափակմանն օժանդակելու նպատակով</p>	<p>2.գ.1 Պարենի գնի անկանոնությունների ցուցանիշը</p>
<p>Նպատակ 3. Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից</p>	
<p>3.1 Մինչև 2030 թ. կրճատել մայրական մահացության համամասնությունը մինչև 70-ից ցածր՝ 100 հազար կենդանաձնի հաշվով</p>	<p>3.1.1 Մայրական մահերը 100 հազար կենդանաձնի հաշվով</p> <p>3.1.2 Հմուտ բժշկական անձնակազմի կողմից ընդունվող ծնունդների համամասնությունը</p>
<p>3.2 Մինչև 2030 թ. վերջ դնել նորածինների և մինչև 5 տարեկան երեխաների կանխարգելելի մահերին. բոլոր երկրները պետք է նպատակ ունենան նվազեցնել վաղ նորածնային մահացությունը առնվազն մինչև 12-ից ցածր՝ 1000 կենդանաձնի հաշվով, իսկ մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը՝ առնվազն մինչև 25-ի՝ 1000 կենդանաձնի հաշվով</p>	<p>3.2.1 Մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը (մահերի թիվը՝ 1000 կենդանաձնի հաշվով)</p> <p>3.2.2 Վաղ նորածնային մահացության ցուցանիշը (մահերը՝ 1000 կենդանաձնի հաշվով)</p>

<p>3.3 Մինչև 2030 թ. վերջ դնել ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և անտեսված արևադարձային հիվանդությունների համաճարակներին և պայքարել հեպատիտի, ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների և այլ վարակիչ հիվանդությունների դեմ</p>	<p>3.3.1 Նոր ՄԻԱՎ վարակների թիվը 1000 չվարակված բնակչի հաշվով՝ ըստ սեռի, տարիքի և բնակչության հիմնական խմբերի</p> <p>3.3.2 Տուբերկուլյոզի 1000 մարդու հաշվով նոր դեպքերի թիվը մեկ տարվա ընթացքում</p> <p>3.3.3 Մալարիայի 1000 մարդու հաշվով նոր դեպքերի թիվը մեկ տարվա ընթացքում</p> <p>3.3.4 Հեպատիտ Բ-ով վարակման դեպքերի թիվը 100 հազար բնակչի հաշվով</p> <p>3.3.5 Անտեսված արևադարձային հիվանդությունների դեմ միջամտությունների կարիք ունեցող մարդկանց թիվը</p>
<p>3.4 Մինչև 2030 թ. մեկ երրորդով կրճատել վաղաժամ մահացությունը ոչ վարակիչ հիվանդություններից՝ կանխարգելման և բուժման միջոցով, և խթանել հոգեկան առողջությունը և բարեկեցությունը</p>	<p>3.4.1 Սրտանոթային հիվանդություններին, քաղցկեղին, շաքարային դիաբետին կամ շնչուղիների քրոնիկական հիվանդություններին վերագրվող մահացությունների թիվը</p> <p>3.4.2 Ինքնասպանության հետևանքով մահացության ցուցանիշ</p>
<p>3.5 Ուժեղացնել թմրամիջոցների չարաշահման կանխարգելումը և բուժումը, այդ թվում՝ թմրադեղերի չարաշահումը և ոգելից խմիչքների վնասաբեր օգտագործումը</p>	<p>3.5.1 Թմրամիջոցների օգտագործման հետևանքով առաջացած խանգարումների բուժման միջամտությունների (դեղորայքային բուժում, սոցիալ-հոգեբանական, վերականգնողական և հետբուժական խնամքի ծառայություններ) ընդգրկումը</p> <p>3.5.2 Ալկոհոլի վնասաբեր օգտագործումը, որն ըստ ազգային համատեքստի սահմանված է որպես ալկոհոլի սպառում մեկ շնչի հաշվով (15 և ավելի բարձր տարիքի անձանց շրջանում) մեկ օրացուցային տարվա ընթացքում՝ մաքուր սպիրտի լիտրերով</p>
<p>3.6 Մինչև 2020 թ. աշխարհում կիսով չափ կրճատել ճանապարհատրանսպորտային պատահարներից մահերի և վիրավորվելու դեպքերի թիվը</p>	<p>3.6.1 Ճանապարհատրանսպորտային պատահարներից մահացության թիվը</p>

<p>3.7 Մինչև 2030 թ. ապահովել սեռական և վերարտադրողական առողջության պահպանման ծառայությունների համընդհանուր հասանելիություն, այդ թվում՝ ընտանիքի պլանավորման, տեղեկատվության և կրթության, ինչպես նաև վերարտադրողական առողջության ինտեգրումը ազգային ռազմավարություններում և ծրագրերում</p>	<p>3.7.1 Վերարտադրողական տարիքի (15-49 տարեկան) կանանց համամասնությունը, որոնց ընտանիքի պլանավորման կարիքները բավարարվում են ժամանակակից մեթոդներով</p> <p>3.7.2 Դեռահասների (10-14 տարեկան, 15-19 տարեկան) ծնելիությունը տվյալ տարիքային խմբի 1000 կնոջ հաշվով</p>
<p>3.8 Հասնել առողջապահության համընդհանուր ընդգրկմանը, այդ թվում՝ պաշտպանություն ֆինանսական ռիսկերից, որակյալ էական առողջապահական ծառայությունների հասանելիություն և անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի էական դեղորայքի և պատվաստանյութերի հասանելիություն բոլորի համար</p>	<p>3.8.1 Հիմնական առողջապահական ծառայությունների ընդգրկումը (հետագծող միջամտությունների հիման վրա սահմանված հիմնական ծառայությունների միջին ընդգրկումը ներառյալ վերարտադրողական, մայրական, նորածնի և մանկական առողջության, վարակիչ հիվանդությունների, ոչ վարակիչ հիվանդությունների ու ծառայության կարողունակությունն ու մատչելիությունը հանրության և բնակչության ամենախոցելի խավի համար</p> <p>3.8.2 1000 մարդու հաշվով մարդկանց թիվը, որոնք ապահովագրված են կամ ընդգրկված են պետական առողջապահական համակարգում</p>
<p>3.9 Մինչև 2030 թ. էականորեն կրճատել վտանգավոր քիմիական նյութերի և օդի, ջրի և հողի աղտոտման և թունավորման հետևանքով մահերի և հիվանդությունների թիվը</p>	<p>3.9.1 Շենքերի ներսում և դրսում օդի աղտոտմանը վերագրվող մահացության ցուցանիշը</p> <p>3.9.2 Աղտոտված ջրի, անապահով սանիտարական պայմանների ու հիգիենայի խստորակցական պայմանների ու հիգիենայի խստորակցական պայմանների ու հիգիենայի խստորակցական պայմանների թիվը (անապահով «Ջուր և սանիտարահիգիենիկ պայմաններ բոլորի համար» (WASH) ծառայություններին ենթարկված լինելը)</p> <p>3.9.3 Ոչ դիտավորյալ թունավորումների պատճառով մահացության թիվը</p>
<p>3.ա Ուժեղացնել Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիայի իրականացումը բոլոր երկրներում՝ ըստ անհրաժեշտության</p>	<p>3.ա.1 Ներկայումս ծխախոտի օգտագործման ըստ տարիքի ստանդարտացված տարածվածությունը 15 և ավելի բարձր տարիքի անձանց շրջանում</p>

<p>3.բ Օժանդակել պատվաստանյութերի և դեղորայքի հետազոտություններին և զարգացմանը վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ, որոնցից հիմնականում տուժում են զարգացող երկրները, հասանելի դարձնել մատչելի էական դեղորայքը և պատվաստանյութերը համաձայն Մտավոր սեփականության իրավունքների առևտրային ասպեկտներին վերաբերող (TRIPS) համաձայնագրի և հանրային առողջապահության վերաբերյալ Դոհայի հռչակագրի, որը հաստատում է զարգացող երկրների իրավունքը՝ լիարժեք կերպով օգտագործելու Համաձայնագրի՝ մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին դրույթները, որոնք վերաբերում են հանրային առողջության պահպանման ճկուն եղանակներին, և, մասնավորապես, հասանելի դարձնել դեղորայքը բոլորի համար</p>	<p>3.բ.1 Մատչելի դեղորայքի և պատվաստանյութերի կայուն հասանելիություն ունեցող բնակչության մասնաբաժինը</p> <p>3.բ.2 Բժշկական հետազոտությունների և հիմնական առողջապահական ոլորտներին տրամադրվող զարգացմանն ուղղված պաշտոնական ընդհանուր գուտ օգնությունը</p>
<p>3.գ Էականորեն ավելացնել առողջապահության ֆինանսավորումը և բուժանձնակազմի հավաքագրումը, զարգացումը, վերապատրաստումը և պահպանումը, զար-</p>	<p>3.գ.1 Բուժաշխատողների խտություն և բաշխվածություն</p>
<p>զացող երկրներում, հատկապես առավել թույլ զարգացած երկրներում և զարգացող փոքր կղզի-պետություններում</p>	
<p>3.դ Ուժեղացնել բոլոր երկրների, մասնավորապես զարգացող երկրների՝ վաղ նախազգուշացման, ռիսկերի նվազեցման և ազգային և գլոբալ առողջապահական ռիսկերի կառավարման կարողությունները</p>	<p>3.դ.1 Միջազգային առողջապահական կանոնակարգի (IHR) նկատմամբ կարողություններն ու արտակարգ պատրաստվածությունը</p>
<p align="center">Նպատակ 4. Ապահովել ներառական ու համապատասխան որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ</p>	

<p>4.1 Մինչև 2030 թ. ապահովել, որ բոլոր աղջիկները և տղաները ստանան անվճար, համապատասխան և որակյալ տարրական և միջնակարգ կրթություն, որը հանգեցնում է պատշաճ և արդյունավետ ուսումնառության նպատակների</p>	<p>4.1.1 Երեխաների և երիտասարդների համամասնությունը՝ (ա) 2-րդ կամ 3-րդ դասարաններում, (բ) տարրական դպրոցն ավարտելիս, (գ) հիմնական դպրոցն ավարտելիս, ովքեր ձեռք են բերել առնվազն գիտելիքների նվազագույն մակարդակ (i) ընթերցանությունից և (ii) մաթեմատիկայից՝ ըստ սեռի:</p>
<p>4.2 Մինչև 2030 թ. ապահովել, որ բոլոր աղջիկների և տղաների համար հասանելի լինեն որակյալ վաղ մանկության զարգացման հնարավորությունները, խնամքը և նախադպրոցական կրթությունը, որպեսզի նրանք պատրաստ լինեն տարրական կրթության</p>	<p>4.2.1 Մինչև 5 տարեկան երեխաների համամասնությունը, ովքեր զարգացման առումով ունեն առողջության, ուսումնառության և սոցիալ-հոգեբանական բարեկեցության բնականոն մակարդակ՝ ըստ սեռի</p> <p>4.2.2 Կազմակերպված ուսումնառությանը մասնակցության թիվը (տարրական դպրոց ընդունվելու պաշտոնական տարիքից մեկ տարի առաջ)՝ ըստ սեռի</p>
<p>4.3 Մինչև 2030 թ. բոլոր կանանց և տղամարդկանց համար ապահովել մատչելի և որակյալ տեխնիկական, միջին-մասնագիտական և բարձրագույն, այդ թվում՝ համալսարանական կրթության հավասար հասանելիություն</p>	<p>4.3.1 Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությանը և ուսուցմանը երիտասարդների և մեծահասակների մասնակցության ցուցանիշը նախորդ 12 ամիսներին՝ ըստ սեռի</p>
<p>4.4 Մինչև 2030 թ. էապես ավելացնել երիտասարդների և մեծահասակների թիվը, ովքեր ունեն պատշաճ, այդ թվում՝ տեխնիկական և միջին-մասնագիտական հմտություններ՝ զբաղվածություն, արժանապատիվ աշխատանք գտնելու և ձեռներեցությամբ զբաղվելու համար</p>	<p>4.4.1 Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (S2S) հմտությունների տիրապետող պատանիների և (կամ) մեծահասակների համամասնությունը՝ ըստ հմտության տեսակի</p>
<p>4.5 Մինչև 2030 թ. վերացնել գենդերային անհավասարությունները կրթության ոլորտում և ապահովել հավասար հասանելիություն ուսման և միջին-մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում խոցելիների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, տեղաբնիկ ժողովուրդների և խոցելի իրավիճակներում գտնվող երեխաների համար</p>	<p>4.5.1 Հավասարության համաթվեր (իզական/արական, գյուղական/քաղաքային, ունևորության ստորին/վերին քվիլիտիլ և այլն, օրինակ, հաշմանդամության կարգավիճակ, տեղաբնիկ ժողովուրդներ և հակամարտություններից տուժածներ, երբ տվյալներ առկա լինեն) այս ցանկի բոլոր կրթական ցուցանիշների համար, որոնք հնարավոր է տարանջատել</p>

<p>4.6 Մինչև 2030 թ. ապահովել, որ պատանիները և մեծահասակների զգալի հատվածը՝ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք, դառնան տառաճանաչ և թվաճանաչ</p>	<p>4.6.1 Բնակչության տոկոսը տվյալ տարիքային խմբում, ովքեր ձեռք են բերել առնվազն որոշակի մակարդակի (ա) տառաճանաչության և (բ) թվաճանաչության գործուն հմտություններ՝ ըստ սեռի</p>
<p>4.7 Մինչև 2030 թ. ապահովել, որ բոլոր սովորողները ձեռք բերեն կայուն զարգացումը խթանելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, այդ թվում, ի թիվս այլոց, կայուն զարգացման և կայուն կենսակերպի, մարդու իրավունքների, գենդերային հավասարության, խաղաղության և բռնությունը մերժող մշակույթի խթանման, աշխարհի քաղաքացիության, ինչպես նաև մշակութային բազմազանության և կայուն զարգացման մեջ մշակույթի ունեցած ավանդը գնահատող ուսուցմամբ</p>	<p>4.7.1 Թե ինչ չափով են (i) զլորալ քաղաքացիության կրթությունն ու (ii) կրթություն հանուն կայուն զարգացման առարկաները՝ ներառյալ գենդերային հավասարության ու մարդու իրավունքների նեգժումը (մեյնսթրիմինգը) բոլոր մակարդակներում ընդգրկված (ա) ազգային կրթության ռազմավարության, (բ) առարկայացանկի, (գ) ուսուցիչների վերապատրաստման, (դ) աշակերտների գնահատման մեջ</p>
<p>4.ա Կառուցել և վերազինել ուսումնական հաստատությունների շենքային հարմարությունները, որոնցում հաշվի են առնված երեխաների, հաշմանդամների և գենդերային տարբերությունների առանձնահատկությունները, և որոնք ապահովում են անվտանգ, բռնությունից</p>	<p>4.ա.1 Դպրոցների համամասնությունը, որոնք ունեն. (ա) էլեկտրականություն, (բ) համացանց՝ մանկավարժական նպատակներով, (գ) համակարգիչներ՝ մանկավարժական նպատակներով, (դ) հարմարեցված ենթակառուցվածքներ և</p>
<p>զերծ, ներառական և արդյունավետ ուսումնառության միջավայր բոլորի համար</p>	<p>նյութեր հաշմանդամություն ունեցող աշակերտների համար, (ե) հիմնական խմելու ջուր, (զ) մեկ սեռի համար նախատեսված տարրական սանիտարահիգիենիկ հարմարություններ, (է) ձեռքերը լվանալու տարրական հարմարություններ (համաձայն «Ջուր և սանիտարահիգիենիկ պայմաններ բոլորի համար» ցուցանիշի սահմանումների)</p>

<p>4.բ Մինչև 2020 թ. էականորեն և զլոբալ ընդգրկումով ավելացնել զարգացող երկրներին տրամադրվող կրթաթոշակները, մասնավորապես առավել թույլ զարգացած երկրներին, զարգացող փոքր կղզի-պետություններին և աֆրիկյան երկրներին՝ բարձրագույն կրթության համակարգում, այդ թվում՝ միջին-մասնագիտական ուսուցման, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների, տեխնիկական, ճարտարագիտական և գիտական ծրագրերում ընդգրկվելու նպատակով՝ զարգացած երկրներում և այլ զարգացող երկրներում</p>	<p>4.բ.1 Զարգացմանն ուղղված պաշտոնական օգնության հոսքերի ծավալը կրթաթոշակների համար՝ ըստ ոլորտների և ուսման տեսակի</p>
<p>4.գ Մինչև 2030 թ. զարգացող երկրներում, հատկապես առավել թույլ զարգացած երկրներում և զարգացող փոքր կղզի-պետություններում էականորեն ավելացնել որակավորված ուսուցիչների թվաքանակը, այդ թվում՝ ուսուցիչների պատրաստման նպատակով ստեղծվող միջազգային գործակցության միջոցով</p>	<p>4.գ.1 Ուսուցիչների համամասնությունը (ա) նախադպրոցական հիմնարկներում, (բ) տարրական, (գ) հիմնական, (դ) ավագ դպրոցի մակարդակում, ովքեր նախքան աշխատանքի անցնելը կամ աշխատելուն զուգահեռ ստացել են տվյալ երկրում համապատասխան մակարդակում դասավանդելու համար պահանջվող ուսուցչի առնվազն նվազագույն կազմակերպված կրթություն (օրինակ, մանկավարժական կրթություն)</p>
<p>Նպատակ 5. Հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին</p>	
<p>5.1 Ամենուր վերջ դնել բոլոր կանանց և աղջիկների նկատմամբ գործադրվող խտրականության բոլոր ձևերին</p>	<p>5.1.1 Անկախ իրավական դաշտի առկայությունից, խթանել, կիրարկել և մշտադիտարկել սեռի հիմքով հավասարությունը և խտրականության բացառումը</p>

<p>5.2 Վերացնել բոլոր կանանց և աղջիկների հանդեպ գործադրվող բռնության բոլոր ձևերը պետական և մասնավոր ոլորտներում, այդ թվում՝ թրաֆիքինգը և սեռական ու շահագործման այլ տեսակները</p>	<p>5.2.1 Երբևէ գուգրնկեր ունեցած 15 տարեկան և ավելի բարձր տարիքի կանանց և աղջիկների մասնաբաժինը, ովքեր ենթարկվել են ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական բռնության ներկա կամ նախկին գուգրնկերոջ կողմից վերջին 12 ամիսների ընթացքում՝ ըստ բռնության ձևի և ըստ տարիքի</p> <p>5.2.2 15 տարեկան և ավելի բարձր տարիքի կանանց և աղջիկների մասնաբաժինը, ովքեր ենթարկվել են սեռական բռնության գուգրնկեր չհանդիսացող անձանց կողմից վերջին 12 ամիսների ընթացքում, ըստ տարիքի և բռնության կատարման վայրի</p>
<p>5.3 Վերացնել բոլոր վնասակար գործելաձևերը, ինչպիսիք են՝ երեխաների, վաղ և հարկադրյալ ամուսնությունները և կանանց սեռական օրգանների խեղումը</p>	<p>5.3.1 20-24 տարեկան կանանց համամասնությունը, ովքեր ամուսնացել են կամ սեռական կապի մեջ են գտնվել նախքան 15 տարեկան և նախքան 18 տարեկան դառնալը</p> <p>5.3.2 15-49 տարեկան աղջիկների և կանանց համամասնությունը, ովքեր ենթարկվել են կանանց սեռական օրգանների խեղման կամ կտրման՝ ըստ տարիքի</p>
<p>5.4 Ճանաչել և արժևորել չվարձատրվող տնային և խնամքի աշխատանքը՝ հանրային ծառայությունների տրամադրման, ենթակառուցվածքների և սոցիալական պաշտպանության քաղաքականությունների և տնային տնտեսությունում կամ ընտանիքում, ինչպես հատուկ է տվյալ երկրին, համատեղ պատասխանատվության խթանման միջոցով</p>	<p>5.4.1 Չվարձատրվող տնային և խնամքի աշխատանքի վրա ծախսված ժամանակի համամասնությունը՝ ըստ սեռի, տարիքի և տեղի</p>
<p>5.5 Ապահովել կանանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը և հավասար հնարավորությունները քաղաքական, տնտեսական և հանրային կյանքում որոշումների կայացման բոլոր մակարդակներում ղեկավար դիրք զբաղեցնելու համար</p>	<p>5.5.1 Ազգային խորհրդարաններում և տեղական կառավարման մարմիններում կանանց զբաղեցրած տեղերի համամասնությունը</p> <p>5.5.2 Ղեկավար պաշտոններ զբաղեցնող կանանց համամասնությունը</p>
<p>5.6 Ապահովել սեռական և վերարտադրողական առողջության պահպանման ծառայությունների և վերարտադրողական իրավունքների համընդհանուր հասանելիություն, ինչպես համաձայնեցվել է ըստ Բնակչության և</p>	<p>5.6.1 15-49 տարեկան կանանց համամասնությունը, ովքեր ինքնուրույն իրազեկված որոշումներ են կայացնում սեռական հարաբերությունների, հակաբեղմնավորիչներ</p>

<p>զարգացման հիմնահարցերին նվիրված միջազգային խորհրդաժողովի գործողությունների ծրագրի և Պեկինյան գործողությունների ծրագրի ու դրանց վերանայման խորհրդաժողովների ելքային փաստաթղթերի</p>	<p>րի օգտագործման և վերարտադրողական առողջության պահպանման հարցերում 5.6.2 15-49 տարեկան կանանց համար սեռական և վերարտադրողական առողջության պահպանման, տեղեկատվության և կրթության հասանելիություն երաշխավորող օրենքներ և կանոնակարգեր ունեցող երկրների թիվը</p>
<p>5.ա Ձեռնարկել բարեփոխումներ՝ կանանց տրամադրելու հավասար իրավունքներ տնտեսական ռեսուրսների նկատմամբ, ինչպես նաև հողի և գույքի այլ ձևերի նկատմամբ սեփականության և վերահսկողության, ֆինանսական ծառայություններից, ժառանգությունից և բնական պաշարներից օգտվելու իրավունքներ՝ ներպետական օրենքների համաձայն</p>	<p>5.ա.1 (ա) Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ սեփականության կամ ապահով իրավունքներ ունեցող մարդկանց համամասնությունը՝ ըստ սեռի, (բ) կանանց մասնաբաժինը գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատերերի կամ իրավակիրների մեջ՝ ըստ հողի տիրապետման պայմանների</p> <p>5.ա.2 Երկրների համամասնությունը, որտեղ իրավական դաշտը (այդ թվում՝ սովորույթային իրավունքը) երաշխավորում է կանանց հավասար իրավունքները հողի սեփականության և (կամ) վերահսկողության նկատմամբ</p>
<p>5.բ Ընդլայնել բարձրարդյունավետ, մասնավորապես՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործումը՝ կանանց զորացումը խթանելու նպատակով</p>	<p>5.բ.1 Բջջային հեռախոս ունեցող անհատների համամասնությունը՝ ըստ սեռի</p>
<p>5.գ Ընդունել և ամրապնդել առողջ քաղաքականություն և կիրարկելի օրենսդրություն՝ գենդերային հավասարության խթանման և բոլոր մակարդակներում բոլոր կանանց և աղջիկների զորացման նպատակով</p>	<p>5.գ.1 Երկրների համամասնությունը, որոնք կիրառում են գենդերային հավասարությանը և կանանց զորացմանը հետևելու և հանրային հատկացումներ կատարելու համակարգեր</p>
<p>Նպատակ 6. Ապահովել հասանելիություն և կայուն ձևով կառավարել ջուրն ու սանիտարական պայմանները բոլորի համար</p>	
<p>6.1 Մինչև 2030 թ. ձեռք բերել անվտանգ և մատչելի խմելու ջրի համընդհանուր և հավասար հասանելիություն բոլորի համար</p>	<p>6.1.1 Անվտանգ ձևով կառավարվող խմելու ջրի մատակարարման ծառայություններից օգտվող բնակչության համամասնությունը</p>

<p>6.2 Մինչև 2030 թ. ձեռք բերել համարժեք և հավասար սանիտարահիգիենիկ պայմաններ բոլորի համար, և վերջ դնել բնական կարիքները դրսում հոգալուն, հատուկ ուշադրություն դարձնելով կանանց, աղջիկների և խոցելի իրավիճակներում գտնվողների կարիքներին</p>	<p>6.2.1 Անվտանգ ձևով կառավարվող սանիտարահիգիենիկ ծառայություններից, այդ թվում՝ օձառով և ջրով ձեռքերը լվանալու հարմարությունից օգտվող բնակչության համամասնությունը</p>
<p>6.3 Մինչև 2030 թ. բարելավել ջրի որակը՝ կրճատելով աղտոտումը, վերացնելով վտանգավոր քիմիկատներ և նյութեր թափելը և նվազեցնելով դրանց արտահոսքերը, կիսով չափ կրճատելով չմաքրվող կեղտաջրերի մասնաբաժինը և էականորեն մեծացնելով վերամշակումը և անվտանգ վերօգտագործումն ամբողջ աշխարհում</p>	<p>6.3.1 Անվտանգ ձևով մաքրված կեղտաջրերի համամասնությունը</p> <p>6.3.2 Ջրային ավազանների համամասնությունը շրջակա որակյալ ջրով</p>
<p>6.4 Մինչև 2030 թ. էականորեն մեծացնել ջրօգտագործման արդյունավետությունը բոլոր ոլորտներում և ապահովել քաղցրահամ ջրի կայուն ջրառը և ջրամատակարարումը՝ լուծելու սակավաջրության խնդիրը և էականորեն կրճատել սակավաջրությունից տառապող մարդկանց թիվը</p>	<p>6.4.1 Ջրօգտագործման արդյունավետության մեջ ժամանակի ընթացքում կատարված փոփոխությունը</p> <p>6.4.2 Ջրի պակասի պատճառած լարվածության (սթրեսի) մակարդակը. մաքուր ջրի ետ քաշվելը գոյություն ունեցող մաքուր ջրի պաշարների հարաբերակցությամբ</p>
<p>6.5 Մինչև 2030 թ. իրականացնել ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում բոլոր մակարդակներում, այդ թվում՝ համապատասխան դեպքերում, անդրսահմանային գործակցության միջոցով</p>	<p>6.5.1 Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման իրականացման աստիճանը (0-100)</p>
<p>6.6 Մինչև 2020 թ. պաշտպանել և վերականգնել ջրաէկոհամակարգերը, այդ թվում՝ լեռները, անտառները, ջրաճահճային տարածքները, գետերը, ջրաբեր շերտերը և լճերը</p>	<p>6.6.1 Ջրաէկոհամակարգերի չափերի մեջ ժամանակի ընթացքում կատարված փոփոխությունը</p>

<p>6.ա Մինչև 2030 թ. ընդլայնել միջազգային գործակցությունը և զարգացող երկրներին ցուցաբերվող կարողությունների զարգացմանն ուղղված օժանդակությունը ջրամատակարարմանը և ջրահեռացմանն առնչվող աշխատանքներում և ծրագրերում, այդ թվում՝ ջրի հավաքում, աղազերծում, ջրի խնայողություն, կեղտաջրերի մաքրում, վերամշակման և վերօգտագործման տեխնոլոգիաներ</p>	<p>6.ա.1 Ջրամատակարարման և ջրահեռացմանն առնչվող՝ զարգացմանն ուղղված պաշտոնական օգնության քանակը, որը մաս է կազմում պետության կողմից համակարգվող ծախսերի պլանի</p>
<p>6.բ Սատարել և ուժեղացնել տեղական համայնքների մասնակցությունը ջրամատակարարման և ջրահեռացման կառավարման բարելավմանը</p>	<p>6.բ.1 Տեղական վարչական միավորների համամասնությունը, որոնք ունեն հաստատված և գործող քաղաքականություններ և ընթացակարգեր՝ ջրամատակարարման և ջրահեռացման կառավարման մեջ տեղական համայնքների մասնակցության համար</p>
<p>Նպատակ 7. Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն</p>	
<p>7.1 Մինչև 2030 թ. ապահովել մատչելի, հուսալի և ժամանակակից էներգետիկ ծառայությունների համընդհանուր հասանելիություն</p>	<p>7.1.1 Էլեկտրականություն ունեցող բնակչության համամասնությունը 7.1.2 Հիմնականում մաքուր վառելիքին և տեխնոլոգիաներին ապավինող բնակչության համամասնությունը</p>
<p>7.2 Մինչև 2030 թ. էապես մեծացնել վերականգնվող էներգիայի մասնաբաժինը էներգիայի տարբեր տեսակների համադրության մեջ ամբողջ աշխարհում</p>	<p>7.2.1 Վերականգնվող էներգիայի մասնաբաժինը էներգիայի ընդհանուր վերջնական սպառման մեջ</p>
<p>7.3 Մինչև 2030 թ. կրկնապատկել էներգաարդյունավետության բարելավման գլոբալ մակարդակը</p>	<p>7.3.1 Էներգաինտենսիվությունը՝ չափված առաջնային էներգիայի և ՀՆԱ-ի տեսակետից</p>
<p>7.ա Մինչև 2030 թ. խորացնել միջազգային գործակցությունը՝ դյուրացնելու մաքուր էներգիայի, այդ թվում՝ վերականգնվող էներգիայի հետազոտման և տեխնոլոգիաների, էներգաարդյունավետության և զարգացած ու ավելի մաքուր հանածո վառելիքի տեխնոլոգիաների հասանելիությունը, խթանել ներդրումները էներգետիկ ենթակառուցվածքներում և մաքուր էներգիայի տեխնոլոգիաներում</p>	<p>7.ա.1 2020-ից սկսած ամեն տարի մոբիլիզացվող գումարը ԱՄՆ դոլարով՝ 100 մլրդ-ի հանձնառությանը հաշվետու կերպով</p>

<p>7.բ Մինչև 2030 թ. ընդլայնել ենթակառուցվածքները և արդիականացնել տեխնոլոգիաները՝ ժամանակակից և կայուն էներգետիկ ծառայություններ մատուցելու բոլորին զարգացող երկրներում, մասնավորապես՝ առավել թույլ զարգացած երկրներում, զարգացող փոքր կղզի-պետություններում և դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրներում՝ համաձայն վերջիններիս համապատասխան օժանդակության ծրագրերի</p>	<p>7.բ.1 Էներգիայի արդյունավետության բնագավառում ներդրումները, որպես ՀՆԱ-ի տոկոս, և ֆինանսական փոխանցումների մեջ արտաքին ուղիղ ներդրումների քանակը կայուն զարգացման ծառայությունների ենթակառուցվածքների ու տեխնոլոգիայի համար</p>
<p>Նպատակ 8. Խթանել կայացած, ներառական և կայուն տնտեսական աճ, լիարժեք և արտադրողական զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար</p>	
<p>8.1 Պահպանել մեկ շնչին ընկնող տնտեսական աճը համաձայն ներպետական հանգամանքների, և, մասնավորապես, համախառն ներքին արդյունքի տարեկան առնվազն 7 տոկոս աճ առավել թույլ զարգացած երկրներում</p>	<p>8.1.1 Մեկ շնչին ընկնող իրական ՀՆԱ-ի տարեկան աճի ցուցանիշը</p>
<p>8.2 Հասնել տնտեսական արտադրողականության ավելի բարձր մակարդակների՝ բազմազանեցման, տեխնոլոգիաների արդիականացման և նորարարությունների միջոցով, այդ թվում՝ բարձր ավելացված արժեք ունեցող և աշխատատար ոլորտներում</p>	<p>8.2.1 Մեկ զբաղված անձին ընկնող իրական ՀՆԱ-ի տարեկան աճի ցուցանիշը</p>
<p>8.3 Խթանել զարգացմանը միտված քաղաքականություններ, որոնք օժանդակում են արտադրողական աշխատանքին, արժանապատիվ աշխատատեղերի ստեղծմանը, ձեռներեցությանը, ստեղծագործական և նորարարական մտտեցմանը, խրախուսել միկրո-, փոքր և միջին ձեռնարկությունների ֆորմալացումն ու աճը, այդ թվում՝ ֆինանսական ծառայությունների հասանելիության միջոցով</p>	<p>8.3.1 Ոչ ֆորմալ զբաղվածության համամասնությունը ոչ գյուղատնտեսական զբաղվածության մեջ՝ ըստ սեռի</p>
<p>8.4 Մինչև 2030 թ. շարունակաբար բարելավել գլոբալ ռեսուրսների արդյունավետությունը</p>	<p>8.4.1 Պաշարների սպառման ցուցանիշը, նույնը՝ ըստ մեկ շնչի, նույնը՝ ըստ ՀՆԱ-ի</p>

<p>սպառման և արտադրության մեջ, ձգտել տնտեսական աճը առանձնացնել շրջակա միջավայրի վատթարացումից՝ համաձայն Կայուն սպառման և արտադրության ծրագրերի տասնամյա շրջանակի, զարգացած երկրների առաջատարությամբ</p>	<p>8.4.2 Պաշարների ներքին սպառումը, նույնը՝ ըստ մեկ շնչի, նույնը՝ ըստ ՀՆԱ-ի</p>
<p>8.5 Մինչև 2030 թ. հասնել լիարժեք և արտադրողական զբաղվածության և արժանապատիվ աշխատանքի բոլոր կանանց և տղամարդկանց, այդ թվում՝ երիտասարդների և հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչպես նաև հավասար վարձատրություն՝ հավասարարժեք աշխատանքի դիմաց</p>	<p>8.5.1 Իգական և արական սեռի վարձու աշխատողների ժամական միջին վատակը ըստ զբաղմունքի, տարիքային խմբի և հաշմանդամություն ունենալու հանգամանքի</p> <p>8.5.2 Գործազրկության մակարդակը ըստ սեռի, տարիքային խմբի և հաշմանդամություն ունենալու հանգամանքի</p>
<p>8.6 Մինչև 2020 թ. էապես կրճատել զբաղվածություն չունեցող, կրթություն կամ ուսուցում չստացող երիտասարդների մասնաբաժինը</p>	<p>8.6.1 Կրթություն կամ ուսուցում չստացող, զբաղվածություն չունեցող երիտասարդների (15-24 տարեկան) համամասնությունը</p>
<p>8.7 Ձեռնարկել անհապաղ և արդյունավետ միջոցառումներ՝ իսպառ վերացնելու հարկադրյալ աշխատանքը, վերջ դնելու ժամանակակից ստրկությանը և մարդկանց թրաֆիքինգին, ապահովելու երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի, այդ թվում՝ մանուկ զինվորների հավաքագրման և օգտագործման արգելումն ու վերացումը, ինչպես նաև մինչև 2025 թ. վերջ դնել երեխայի աշխատանքին իր բոլոր ձևերով</p>	<p>8.7.1 Երեխայի աշխատանքում ներգրավված 5-17 տարեկան երեխաների համամասնությունը և թիվը՝ ըստ սեռի և տարիքի</p>
<p>8.8 Պաշտպանել աշխատանքային իրավունքները և խթանել անվտանգ և ապահով աշխատանքային միջավայր բոլոր աշխատավորների, այդ թվում՝ միգրանտ աշխատավորների, մասնավորապես կին միգրանտների և անկայուն զբաղվածություն ունեցողների</p>	<p>8.8.1 Մահացու և ոչ մահացու ելքով աշխատանքային վնասվածքների հաճախականության ցուցանիշը՝ ըստ սեռի և միգրանտի կարգավիճակի</p> <p>8.8.2 Աշխատանքային իրավունքների ազգային համապատասխանեցման ավելացում (միավորումներ կազմելու ազատություն և կոլեկտիվ պայմանագիր) համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) տեքստային աղբյուրների և ազգային օրենսդրության՝ ըստ սեռի ու միգրանտի կարգավիճակի</p>

<p>8.9 Մինչև 2030 թ. մշակել և իրականացնել ռազմավարություն՝ խթանելու կայուն զբոսաշրջությունը, որն ստեղծում է աշխատատեղեր և խթանում տեղական մշակույթն ու արտադրատեսակները</p>	<p>8.9.1 Զբոսաշրջությունից ստացվող ուղղակի ՀՆԱ-ն, որպես ընդհանուր ՀՆԱ-ի համամասնություն, և նույնը՝ աճի ցուցանիշում</p> <p>8.9.2. Զբոսաշրջության արդյունաբերության մեջ աշխատատեղերի թիվը, որպես ընդհանուր աշխատատեղերի համամասնություն և նույնը աճի ցուցանիշում՝ ըստ սեռի</p>
<p>8.10 Հզորացնել ներպետական ֆինանսական կառույցների կարողությունները՝ խրախուսելու և ընդլայնելու բանկային, ապահովագրական և ֆինանսական ծառայությունների հասանելիությունը բոլորի համար</p>	<p>8.10.1 Առևտրային բանկերի մասնաճյուղերի և բանկոմատների թիվը 100 հազար մեծահասակի հաշվով</p> <p>8.10.2 Բանկում կամ այլ ֆինանսական հաստատությունում կամ բջջային դրամական ծառայություն մատուցողի մոտ հաշիվ ունեցող չափահասների (15 տարեկան և ավելի բարձր տարիքի) համամասնությունը</p>
<p>8.ա Մեծացնել «Օգնություն առևտրին» նախաձեռնության շրջանակում տրամադրվող աջակցությունը զարգացող երկրներին, մասնավորապես առավել թույլ զարգացած երկրներին, այդ թվում՝ «Առավել թույլ զարգացած երկրներին առևտրին առնչվող խորհրդատվական օժանդակության ընդլայնված և ինտեգրված շրջանակ»-ի միջոցով</p>	<p>8.ա.1 Հանձնառություններ և հատկացումներ «Օգնություն առևտրին» նախաձեռնության շրջանակում</p>
<p>8.բ Մինչև 2020 թ. մշակել և գործարկել երիտասարդների զբաղվածության գլոբալ ռազմավարություն և իրականացնել Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աշխատատեղերի վերաբերյալ գլոբալ պակտը՝</p>	<p>8.բ.1 Սոցիալական պաշտպանության և զբաղվածության ծրագրերում ընդհանուր պետական ծախսերը՝ որպես պետական բյուջեի և ՀՆԱ-ի համամասնություն</p>

**Նպատակ 9. Ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ,
աջակցել ներառական և կայուն արդյունաբերության զարգացմանը
և խթանել նորարարությունը**

<p>9.1 Մշակել որակյալ, հուսալի, կայուն և դիմակայուն, այդ թվում՝ տարածաշրջանային և անդրսահմանային ենթակառուցվածքներ՝ օժանդակելու տնտեսական զարգացմանը և մարդկանց բարեկեցությանը, ուշադրության կենտրոնում պահելով մատչելի և արդարացի հասանելիություն բոլորի համար</p>	<p>9.1.1 Տարվա բոլոր եղանակներին բանուկ ճանապարհից 2 կմ հեռու ապրող գյուղական բնակչության համամասնությունը</p> <p>9.1.2 Ուղևորների և բեռների ծավալները՝ ըստ փոխադրման եղանակի</p>
<p>9.2 Խթանել ներառական և կայուն արդյունաբերության զարգացումը և մինչև 2030 թ. զգալիորեն մեծացնել զբաղվածության և համախառն ներքին արդյունքի մեջ արդյունաբերության բաժնեմասը՝ ազգային հանգամանքներին համահունչ կերպով, և կրկնապատկել արդյունաբերության բաժնեմասը առավել թույլ զարգացած երկրներում</p>	<p>9.2.1 Արտադրության ավելացված արժեքը որպես ՀՆԱ-ի համամասնություն և մեկ շնչի հաշվով</p> <p>9.2.2 Արտադրության ոլորտում զբաղվածությունը՝ որպես ընդհանուր զբաղվածության համամասնություն</p>
<p>9.3 Փոքրածավալ արդյունաբերական և այլ ձեռնարկությունների համար, մասնավորապես զարգացող երկրներում, ավելի հասանելի դարձնել ֆինանսական ծառայությունները, այդ թվում՝ մատչելի վարկերը, մեծացնել դրանց ինտեգրումը արժեքի շղթաներում և շուկաներում</p>	<p>9.3.1 Փոքր արդյունաբերական ձեռնարկությունների համամասնությունը ընդհանուր արդյունաբերության ավելացված արժեքի մեջ</p> <p>9.3.2 Վարկ կամ վարկային գիծ ունեցող փոքր արդյունաբերական ձեռնարկությունների համամասնությունը</p>
<p>9.4 Մինչև 2030 թ. արդիականացնել ենթակառուցվածքները և վերազինել ձեռնարկությունները՝ դրանք դարձնելու կայուն՝ ռեսուրսների օգտագործման ավելի բարձր արդյունավետությամբ և մաքուր, շրջակա միջավայրի համար անվտանգ տեխնոլոգիաների և գործընթացների առավել լայն ընդունմամբ՝ բոլոր երկրների ձեռնարկած գործողությունների շնորհիվ՝ իրենց համապատասխան հզորությունների համաձայն</p>	<p>9.4.1 CO₂-ի արտանետումները՝ ավելացված արժեքի մեկ միավորի հաշվով</p>

<p>9.5 Ընդլայնել գիտահետազոտական աշխատանքները, արդիականացնել տեխնոլոգիական հնարավորությունները արդյունաբերության ճյուղերում բոլոր մասնավորապես՝ զարգացող երկրներում, այդ թվում՝ մինչև 2030 թ. խրախուսել նորարարությունները և էապես ավելացնել գիտահետազոտական և զարգացման ոլորտի աշխատողների թիվը 1 մլն մարդու հաշվով, մեծացնել գիտահետազոտական և զարգացման աշխատանքների վրա կատարվող պետական և մասնավոր ծախսերը</p>	<p>9.5.1 Գիտահետազոտական և զարգացման աշխատանքների վրա կատարվող ծախսերը՝ արտահայտված որպես ՀՆԱ-ի համամասնություն</p> <p>9.5.2 Գիտահետազոտական աշխատանք կատարողների թիվը (լրիվ դրույքի համարժեքով) մեկ միլիոն բնակչի հաշվով</p>
<p>9.ա Դյուրացնել կայուն և դիմակայուն ենթակառուցվածքների զարգացումը զարգացող երկրներում՝ ցուցաբերելով ընդլայնված ֆինանսական, տեխնոլոգիական և փորձագիտական օժանդակություն – աֆրիկյան երկրներին, առավել թույլ զարգացած երկրներին, դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրներին և զարգացող փոքր կղզիպետություններին</p>	<p>9.ա.1 Ընդհանուր միջազգային պաշտոնական օժանդակություն (զարգացմանն ուղղված պաշտոնական օգնություն՝ գումարած այլ պաշտոնական հոսքեր) ենթակառուցվածքներին</p>
<p>9.բ Օժանդակել հայրենական տեխնոլոգիաների զարգացմանը, գիտահետազոտական աշխատանքներին և նորարարությանը զարգացող երկրներում, այդ թվում՝ ապահովելով քաղաքականությունների առումով նպաստավոր միջավայր, ի թիվս այլոց, արդյունաբերության բազմազանեցման և հումքային ապրանքներին արժեքի ավելացման համար</p>	<p>9.բ.1 Միջին և բարձր տեխնոլոգիաների ճյուղի ավելացված արժեքի համամասնությունը ընդհանուր ավելացված արժեքի մեջ</p>
<p>9.գ Զգալիորեն մեծացնել տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների հասանելիությունը և ձգտել տրամադրել համացանցի համընդհանուր և մատչելի հասանելիություն առավել թույլ զարգացած երկրներին մինչև 2020 թ.</p>	<p>9.գ.1 Բջջային ցանցի ծածկույթ ունեցող բնակչության համամասնությունը՝ ըստ տեխնոլոգիայի</p>

**Նպատակ 10. Կրճատել անհավասարությունը երկրների ներսում
և դրանց միջև**

<p>10.1 Մինչև 2030 թ. աստիճանաբար հասնել բնակչության ստորին 40 տոկոսի եկամուտների աճին՝ ազգային միջինից բարձր ցուցանիշով, և պահպանել այդ աճը</p>	<p>10.1.1 Տնային տնտեսությունների ծախսերի կամ մեկ շնչին ընկնող եկամտի աճի ցուցանիշները բնակչության ստորին 40 տոկոսի և ամբողջ բնակչության շրջանում</p>
<p>10.2 Մինչև 2030 թ. ուժեղացնել և խթանել բոլորի սոցիալական, տնտեսական և քաղաքական ներառումը՝ անկախ տարիքից, սեռից, հաշմանդամություն ունենալու հանգամանքից, ռասայից, էթնիկական ծագումից, կրոնից կամ տնտեսական կամ այլ կարգավիճակից</p>	<p>10.2.1 Եկամտի միջնարժեքի 50 տոկոսից ցածր սպառում ունեցող մարդկանց համամասնությունը՝ ըստ տարիքի, սեռի և հաշմանդամություն ունենալու հանգամանքի</p>
<p>10.3 Ապահովել հավասար հնարավորություններ և կրճատել արդյունքների անհավասարությունները, այդ թվում՝ վերացնելով խտրական օրենքները, քաղաքականությունները և գործելաձևերը՝ և խթանելով այս առումով պատշաճ օրենսդրության, քաղաքականությունների և գործողությունների ընդունումը</p>	<p>10.3.1 Բնակչության համամասնությունը, որը հաղորդել է, որ նախորդ 12 ամսվա ընթացքում անձամբ իր նկատմամբ զգացել է խտրականություն կամ ենթարկվել է ոտնձգությունների, որոնք արգելվում են՝ համաձայն մարդու իրավունքների միջազգային իրավունքի</p>
<p>10.4 Ընդունել քաղաքականություններ, հատկապես հարկաբյուջետային, աշխատավարձերի և սոցիալական պաշտպանության քաղաքականություններ և աստիճանաբար հասնել հավասարության առավել բարձր մակարդակի</p>	<p>10.4.1 ՀՆԱ-ի մեջ աշխատուժի բաժնեմասը, որը կազմված է աշխատավարձերից և սոցիալական պաշտպանության փոխանցումներից</p>
<p>10.5 Բարելավել գլոբալ ֆինանսական շուկաների և հաստատությունների կարգավորումը և մշտադիտարկումը, ուժեղացնել նման կարգավորումների իրականացումը</p>	<p>10.5.1 Ֆինանսական առողջ գործարքների ցուցանիշներ</p>
<p>10.6 Զարգացող երկրների համար ապահովել ընդլայնված ներկայացվածություն և ձայն՝ գլոբալ միջազգային տնտեսական և ֆինանսական հաստատություններում որոշումների կայացման գործում՝ նշված հաստատությունների գործունեությունը դարձնելու առավել արդյունավետ, արժանահավատ, հաշվետվողական և օրինական</p>	<p>10.6.1 Միջազգային կազմակերպություններում զարգացող երկրներից անդամների և նրանց քվեարկելու իրավունքի համամասնությունը</p>

<p>10.7 Դյուրացնել մարդկանց կարգապահ, անվտանգ, կանոնավոր և պատասխանատու միգրացիան և շարժունությունը, այդ թվում՝ պլանավորված և լավ կառավարվող միգրացիոն քաղաքականությունների իրականացման միջոցով</p>	<p>10.7.1 Վարձու աշխատողի կրած հավաքագրման ծախքը որպես մեկնման երկրում վաստակած տարեկան եկամտի տոկոս</p> <p>10.7.2 Երկրների թիվը, որոնք ունեն լավ կառավարվող միգրացիոն քաղաքականություն</p>
<p>10.ա Ներդնել հատուկ և տարբերակված վերաբերմունքի սկզբունքը զարգացող երկրների համար, մասնավորապես՝ առավել թույլ զարգացած երկրներում, ըստ Առևտրի համաշխարհային կազմակերպության համաձայնագրերի</p>	<p>10.ա.1 Առավել թույլ զարգացած երկրներից և զարգացող երկրներից գրոյական սակագնով կատարված ներկրումների նկատմամբ կիրառված սակագնային տողերի համամասնությունը</p>
<p>10.բ Խրախուսել զարգացմանն ուղղված պաշտոնական օգնությունը և ֆինանսական հոսքերը, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները, առավել մեծ կարիք ունեցող պետություններին, մասնավորապես՝ առավել թույլ զարգացած երկրներին, աֆրիկյան երկրներին, զարգացող փոքր կղզի-պետություններին և դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրներին՝ համաձայն վերջիններիս ազգային պլանների և ծրագրերի</p>	<p>10.բ.1 Զարգացմանն ուղղված միջոցների ընդհանուր հոսքերը՝ ըստ ընդունող և դոնոր երկրների և հոսքի տեսակի (օրինակ, զարգացմանն ուղղված պաշտոնական օգնություն, օտարերկրյա ուղղակի ներդրում և այլ հոսքեր)</p>
<p>10.գ Մինչև 2030 թ. միգրանտների դրամական փոխանցումների գործարքների ծախքերը իջեցնել մինչև 3 տոկոսից ցածր և վերացնել 5 տոկոսից բարձր ծախքերով դրամական փոխանցումների միջանցքները</p>	<p>10.գ.1 Դրամական փոխանցումների ծախքերը՝ արտահայտված որպես փոխանցված գումարի համամասնություն</p>
<p>Նպատակ 11. Քաղաքները և մարդկային բնակավայրերը դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ և կայուն</p>	
<p>11.1 Մինչև 2030 թ. բոլորի համար հասանելի դարձնել պատշաճ, անվտանգ և մատչելի բնակարաններ և հիմնական ծառայություններ, արդիականացնել հետնախորշերը</p>	<p>11.1.1 Հետնախորշերում, ոչ ֆորմալ բնակավայրերում կամ անբավարար բնակարանային պայմաններում ապրող քաղաքային բնակչության համամասնությունը</p>
<p>11.2 Մինչև 2030 թ. բոլորի համար հասանելի դարձնել ապահով, մատչելի, հասանելի և կայուն տրանսպորտային համակարգեր՝ բարելավելով ճանապարհների անվտանգությունը,</p>	

<p>հատկապես ընդլայնելով հասարակական տրանսպորտը՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի իրավիճակներում գտնվող անձանց, կանանց, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների կարիքներին</p>	<p>11.2.1 Բնակչության համամասնությունը, որի համար հարմարավետ կերպով հասանելի է հասարակական տրանսպորտը՝ ըստ տարիքի, սեռի և հաշմանդամություն ունենալու հանգամանքի</p>
<p>11.3 Մինչև 2030 թ. խթանել ներառական և կայուն քաղաքայնացումը և մարդկային բնակավայրերի մասնակցային, ինտեգրված և կայուն պլանավորումն ու կառավարումը բոլոր երկրներում</p>	<p>11.3.1 Հողերի օգտագործման ցուցանիշի և բնակչության աճի ցուցանիշի հարաբերակցությունը</p> <p>11.3.2 Քաղաքների պլանավորման և կառավարման մեջ քաղաքացիական հասարակության ուղղակի մասնակցության կառուցվածք ունեցող քաղաքների համամասնությունը, որոնք գործում են կանոնավոր և ժողովրդավար ձևով</p>
<p>11.4 Ուժեղացնել աշխարհի մշակութային և բնական ժառանգության պահպանությանն ու երաշխավորմանն ուղղված ջանքերը</p>	<p>11.4.1 Մշակութային և բնական ժառանգության բոլոր օբյեկտների պահպանմանն ու պաշտպանության մեկ շնչին ընկնող ընդհանուր ծախսը (պետական և մասնավոր)՝ ըստ ժառանգության տեսակի (մշակութային, բնական, խառը և Համաշխարհային ժառանգության կենտրոնի նշումով), կառավարման մակարդակի (պետական, մարզային և տեղական/քաղաքային), ծախսերի տեսակի (գործառնական ծախսում/ներդրում) և մասնավոր ֆինանսավորման տեսակի (բնեղեն նվիրատվություններ, մասնավոր շահույթ չհետապնդող հատված և հովանավորչություն)</p>
<p>11.5 Մինչև 2030 թ. զգալիորեն կրճատել աղետների, այդ թվում՝ ջրին առնչվող աղետների հետևանքով մահերի և տուժածների թիվը և էապես նվազեցնել տնտեսական ուղղակի վնասները գլոբալ համախառն ներքին արդյունքի համեմատ՝ ուշադրության կենտրոնում պահելով աղքատների և խոցելի իրավիճակներում գտնվող անձանց պաշտպանությունը</p>	<p>11.5.1 Աղետների պատճառով մահվան դեպքերի, անհետ կորածների և տուժածների թիվը՝ 100 հազար մարդու հաշվով՝</p> <p>11.5.2 Աղետների պատճառած տնտեսական ուղղակի վնասը կապված գլոբալ ՀՆԱ-ի հետ, ներառյալ աղետների պատճառած վնասը կարևորագույն ենթակառուցվածքներին, և հիմնական ծառայությունների խաթարումը՝</p>
<p>11.6 Մինչև 2030 թ. կրճատել քաղաքների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա մեկ շնչի հաշվով, այդ թվում՝</p>	<p>11.6.1 Կանոնավորապես հեռացվող և համարժեք կերպով վերջնակետում բեռնաթափվող քաղաքային կենցաղային</p>

<p>հատուկ ուշադրություն դարձնելով օդի որակին և կենցաղային ու այլ թափոնների կառավարմանը</p>	<p>կոշտ թափոնների համամասնությունը՝ քաղաքի գոյացրած ընդհանուր թափոնների համեմատ՝ ըստ քաղաքների</p> <p>11.6.2 Մանր մասնիկավոր նյութերի տարեկան միջին մակարդակները (օրինակ, PM2.5 և PM10) քաղաքներում (կշռված ըստ բնակչության)</p>
<p>11.7 Մինչև 2030 թ. համընդհանուր կերպով հասանելի դարձնել ապահով, ներառական և մատչելի, կանաչ և հանրային տարածքներ, մասնավորապես՝ կանանց և երեխաների, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար</p>	<p>11.7.1 Քաղաքների կառուցապատված տարածքների միջին բաժնեմասը, որը հանրային օգտագործման նպատակով բաց տարածք է բոլորի համար՝ ըստ սեռի, տարիքի և հաշմանդամություն ունենալու հանգամանքի</p> <p>11.7.2 Ֆիզիկական կամ սեռական ոտնձգությունների ենթարկված մարդկանց համամասնությունը՝ ըստ սեռի, տարիքի, հաշմանդամություն ունենալու հանգամանքի և բռնության կատարման վայրի՝ վերջին 12 ամսում</p>
<p>11.ա Օժանդակել տնտեսական, սոցիալական և բնապահպանական դրական կապերին քաղաքային, քաղաքամերձ և գյուղական վայրերի միջև՝ ուժեղացնելով ազգային և տարածաշրջանային զարգացման պլանավորումը</p>	<p>11.ա.1 Քաղաքներում բնակվող բնակչության համամասնությունը, որոնք իրականացնում են քաղաքային և տարածաշրջանային զարգացման պլաններ՝ ինտեգրելով բնակչության կանխատեսումները և ռեսուրսների կարիքները՝ ըստ քաղաքի չափի</p>
<p>11.բ Մինչև 2020 թ. էապես մեծացնել քաղաքների և մարդկային այլ բնակավայրերի թիվը, որոնք ընդունում և կենսագործում են ինտեգրված ռազմավարություն և պլաններ՝ ուղղված ներառմանը, ռեսուրսների արդյունավետությանը, կլիմայի փոփոխությունների մեղմացմանը և դրանց հարմարվելուն, աղետների նկատմամբ դիմակայունությանը. մշակել և իրականացնել աղետների ռիսկերի ամբողջական կառավարում բոլոր մակարդակներում՝ «Աղետների ռիսկի նվազեցման Մենդայի 2015-2030 թթ. գործողությունների ծրագրին» համահունչ կերպով</p>	<p>11.բ.1 Տեղական կառավարությունների համամասնությունը, որոնք որդեգրում և իրականացնում են աղետների ռիսկի նվազեցման տեղական ռազմավարություն Աղետների ռիսկի նվազեցման 2015-2030 թթ. Մենդայի շրջանակին համահունչⁱ</p> <p>11.բ.2. Երկրների թիվը, որոնք ունեն ազգային և տեղական աղետների ռիսկի նվազեցման ռազմավարություններⁱ</p>

<p>11.գ Օժանդակել առավել թույլ զարգացած երկրներին, այդ թվում՝ Ֆինանսական և խորհրդատվական օժանդակության միջոցով, կայուն և դիմակայուն շենքեր կառուցելիս՝ օգտագործելով տեղական նյութեր</p>	<p>11.գ.1 Ֆինանսական աջակցության համամասնությունը առավել թույլ զարգացած երկրներին, որը հատկացված է տեղական շինանյութերի օգտագործմամբ կատարվող կայուն, դիմակայուն և ռեսուրսաարդյունավետ շենքերի կառուցմանն ու արդիականացմանը</p>
<p>Նպատակ 12. Ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ</p>	
<p>12.1 Իրականացնել Սպառման և արտադրության կադապարների կայուն ծրագրերի տասնամյա շրջանակը՝ բոլոր երկրների կողմից գործողությունների ձեռնարկմամբ, զարգացող երկրների առաջատարությամբ, հաշվի առնելով զարգացող երկրների զարգացումն ու հնարավորությունները</p>	<p>12.1.1 Կայուն սպառման և արտադրության (ԿՄԱ) ազգային գործողությունների ծրագրեր ունեցող կամ իրենց ազգային քաղաքականություններում կայուն սպառումը և արտադրությունը որպես գերակայություն կամ թիրախ ընդգրկած երկրների թիվը</p>
<p>12.2 Մինչև 2030 թ. հասնել բնական պաշարների կայուն կառավարման և արդյունավետ օգտագործման</p>	<p>12.2.1 Պաշարների սպառման ցուցանիշը, նույնը՝ ըստ մեկ շնչի, նույնը՝ ըստ ՀՆԱ-ի 12.2.2. Պաշարների ներքին սպառումը, նույնը՝ ըստ մեկ շնչի, նույնը՝ ըստ ՀՆԱ-ի</p>
<p>12.3 Մինչև 2030 թ. կիսով չափ կրճատել մեկ շնչին ընկնող պարենի գլոբալ վատնումը մանրածախ և սպառողների մակարդակներում և կրճատել պարենի կորուստները արտադրության և մատակարարման շղթաներում, այդ թվում՝ հետբերքահավաքային կորուստները</p>	<p>12.3.1 Պարենի գլոբալ կորստի համաթիվ</p>
<p>12.4 Մինչև 2020 թ. հասնել քիմիական նյութերի և բոլոր թափոնների բնապահպանորեն անվտանգ կառավարմանը դրանց կյանքի ողջ շրջափուլի ընթացքում՝ համաձայն միջազգային համաձայնեցված շրջանակների, և զգալիորեն կրճատել դրանց արտազատումը մթնոլորտի, ջրի և հողի մեջ՝ նվազեցնելու դրանց բացասական ազդեցությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա</p>	<p>12.4.1 Վտանգավոր և այլ քիմիական նյութերի և թափոնների վերաբերյալ միջազգային բազմակողմ բնապահպանական համաձայնագրերի կողմերի թիվը, որոնք կատարում են տեղեկությունների հաղորդման իրենց հանձնառություններն ու պարտավորությունները, ինչպես դա պահանջվում է յուրաքանչյուր համապատասխան համաձայնագրով 12.4.2 Վտանգավոր թափոնների գոյացումը՝ ըստ մեկ շնչի և աղտազերծված թափոնների համամասնությունը՝ ըստ աղտազերծման տեսակի</p>

<p>12.5 Մինչև 2030 թ. էապես կրճատել թափոնների գոյացումը՝ կանխարգելման, նվազեցման, վերամշակման և վերօգտագործման միջոցով</p>	<p>12.5.1 Վերամշակման ազգային ցուցանիշը, վերամշակված նյութը՝ տոննաներով</p>
<p>12.6 Խրախուսել ընկերություններին՝ հատկապես խոշոր և անդրազգային, ընդունել կայուն գործելաձևեր և կայունության վերաբերյալ տեղեկություններն ընդգրկել իրենց հաշվետվությունների շրջափուլում</p>	<p>12.6.1 Կայունության վերաբերյալ հաշվետվություններ հրապարակող ընկերությունների թիվը</p>
<p>12.7 Խթանել պետական գնումների կայուն գործելաձևեր՝ համաձայն ազգային քաղաքականությունների և գերակայությունների</p>	<p>12.7.1 Պետական գնումների կայուն քաղաքականություններ և գործողությունների ծրագրեր իրականացնող երկրների թիվը</p>
<p>12.8 Մինչև 2030 թ. ապահովել, որ ամենուր մարդիկ ունենան համապատասխան տեղեկություններ և իրազեկվածություն՝ հանուն կայուն զարգացման և բնության հետ ներդաշնակ կենսակերպի</p>	<p>12.8.1 Թե ինչ չափով են (i) գլոբալ քաղաքացիության կրթությունն ու (ii) կրթություն՝ հանուն կայուն զարգացման առարկաները (ներառյալ կլիմայի փոփոխության մասին կրթությունը) ընդգրկված (մեյնսթրիմինգ) (ա) ազգային կրթության ռազմավարության, (բ) առարկայացանկի, (գ) ուսուցիչների վերապատրաստման, (դ) աշակերտների գնահատման մեջ</p>
<p>12.ա Օժանդակել զարգացող երկրներին՝ հզորացնել իրենց գիտական և տեխնոլոգիական կարողությունները՝ որդեգրելու սպառման և արտադրության առավել կայուն սխեմաներ</p>	<p>12.ա.1 Ջարգացող երկրներին՝ հետազոտության և կայուն սպառման ու արտադրության մշակման, ինչպես նաև բնապահպանական առումով անվտանգ տեխնոլոգիաների համար տրամադրվող օժանդակության քանակը</p>
<p>12.բ Մշակել և իրականացնել գործիքներ՝ մշտադիտարկելու կայուն զարգացման ազդեցությունները կայուն զբոսաշրջության վրա, որն ստեղծում է աշխատատեղեր և խթանում տեղական մշակույթն ու արտադրատեսակները</p>	<p>12.բ.1 Կայուն տուրիզմի ռազմավարության կամ քաղաքականության և իրականացված գործողությունների ծրագրերի թիվը՝ համաձայնեցված մշտադիտարկման ու գնահատման գործիքներով</p>

<p>12.գ Ռացիոնալացնել հանաձո վառելիքի սուրփիդիաները, որոնք խրախուսում են վատնողաբար սպառում՝ հեռացնելով շուկայի խաթարումները՝ ըստ ազգային հանգամանքների, այդ թվում՝ վերակազմակերպելով հարկումը և հանելով այդ վնասակար սուրփիդիաները, եթե այդպիսիք կան՝ արտացոլելու դրանց ներգործությունը շրջակա միջավայրի վրա, լիովին հաշվի առնելով զարգացող երկրների առանձնահատուկ կարիքները և պայմանները, և նվազագույնի հասցնելով հնարավոր բացասական ներգործությունը դրանց զարգացման վրա՝ այնպես, որպեսզի պաշտպանվեն աղքատները և տուժած համայնքները</p>	<p>12.գ.1 Հանաձո վառելիքի սուրփիդիաների քանակը ՀՆԱ-ի մեկ միավորի հաշվով (արտադրություն և սպառում) և որպես հանաձո վառելանյութերի վրա կատարված ազգային ընդհանուր ծախսերի մասնաբաժինը</p>
<p>Նպատակ 13. Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմⁱⁱ</p>	
<p>13.1 Ուժեղացնել դիմակայունությունը և հարմարվողականությունը կլիմային առնչվող վտանգների և բնական աղետների նկատմամբ բոլոր երկրներում</p>	<p>13.1.1 Աղետների ռիսկի նվազեցման ազգային և տեղական ռազմավարություն ունեցող երկրների թիվըⁱ</p> <p>13.1.2 Աղետների պատճառով մահվան դեպքերի, անհետ կորածների և տուժածների թիվը 100 հազար մարդու հաշվովⁱ</p>
<p>13.2 Կլիմայի փոփոխություններին ուղղված միջոցառումները ներառել ազգային քաղաքականություններում, ռազմավարություններում և պլաններում</p>	<p>13.2.1 Երկրների թիվը, որոնք հայտնել են այնպիսի ինտեգրված քաղաքականության/ռազմավարության/ծրագրի ստեղծման կամ գործնականացման մասին, որով ավելանում է կլիմայի փոփոխության անբարենպաստ ներգործության նկատմամբ իրենց հարմարվելու կարողությունը, և խթանում կլիմայի նկատմամբ դիմակայունությունը, ինչպես նաև ջերմոցային գազի ցածր արտանետումների այնպիսի զարգացումը, որը չվտանգի պարենի արտադրությունը (ներառյալ ազգային հարմարվողականության ծրագիր, պետականորեն սահմանված ներդրում, պետական հաղորդակցություն, երկու տարին մեկ հաշվետու զեկույցներ կամ այլք)</p>

ⁱⁱ Ընդունելով, որ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիան առաջնային միջազգային և միջկառավարական հարթակն է կլիմայի փոփոխություններին գլոբալ արձագանքը բանակցելու համար:

<p>13.3 Բարելավել կրթությունը, իրազեկվածության բարձրացումը և մարդկային ու ինստիտուցիոնալ կարողությունները կլիմայի փոփոխությունների մեղմացման, հարմարվողականության, ազդեցության նվազեցման և վաղ նախազգուշացման թեմաներն ընդգրկել են տարրական, միջնակարգ և բարձրագույն ուսումնական ծրագրերում</p>	<p>13.3.1 Երկրների թիվը, որոնք (բացասական հետևանքների) մեղմացման, հարմարվողականության, ազդեցության նվազեցման և վաղ նախազգուշացման թեմաներն ընդգրկել են տարրական, միջնակարգ և բարձրագույն ուսումնական ծրագրերում</p> <p>13.3.2. Երկրների թիվը, որոնք հայտնել են հարմարվողականության, (բացասական հետևանքների) մեղմացման ու տեխնոլոգիաների փոխանցման, ինչպես նաև զարգացման գործողությունների կատարման ուղղությամբ իրենց ինստիտուցիոնալ, համակարգային և անհատական կարողությունների ստեղծման հզորացման մասին</p>
<p>13.ա Կատարել ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի զարգացած երկրներ հանդիսացող անդամ պետությունների ստանձնած հանձնառությունը՝ մինչև 2020 թ. բոլոր աղբյուրներից տարեկան համատեղ մոբիլիզացնելու 100 մլրդ դոլար՝ բավարարելու զարգացող երկրների կարիքների մեղմացման նպատակային գործողությունների և իրականացման թափանցիկության համատեքստում, և հնարավորինս արագ լիարժեք կերպով գործարկել Կանաչ կլիմայի հիմնադրամը վերջինիս կապիտալացման միջոցով</p>	<p>13.ա.1 2020-ից սկսած ամեն տարի մոբիլիզացվող գումարը ԱՄՆ դոլարով՝ 100 մլրդ-ի հանձնառությանը հաշվետու կերպով</p>
<p>13.բ Խթանել մեխանիզմներ կլիմայի փոփոխություններին առնչվող արդյունավետ պլանավորում և կառավարում իրականացնելու կարողությունները զարգացնելու նպատակով՝ առավել թույլ զարգացած երկրներում և զարգացող փոքր կղզի-պետություններում՝ այդ թվում՝ ուշադրության կիզակետում պահելով կանանց, երիտասարդներին և տեղական ու մեկուսացված համայնքները</p>	<p>13.բ.1 Առավել թույլ զարգացած երկրների և զարգացող փոքր կղզի-պետությունների թիվը, որոնք ստանում են մասնագիտացված աջակցություն (և այդ ստացված աջակցության քանակը, ներառյալ՝ ֆինանսները, տեխնոլոգիան ու կարողությունների ստեղծումը) կլիմայի փոփոխություններին առնչվող արդյունավետ պլանավորում և կառավարում իրականացնելու նպատակով կարողություններ զարգացնելու մեխանիզմների համար, այդ թվում՝ ուշադրության կիզակետում պահելով կանանց, երիտասարդներին և տեղական ու մեկուսացված համայնքներին</p>

Նպատակ 14. Ապահովել օվկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանությունը և կայուն օգտագործումը՝ հանուն կայուն զարգացման	
14.1 Մինչև 2025 թ. կանխել և զգալիորեն կրճատել ծովերի բոլոր տեսակի աղտոտումները՝ մասնավորապես ցամաքում իրականացվող գործողությունների հետևանքով, այդ թվում՝ ծովերի աղտոտումը ջրաբերուկներով և սննդանյութերով	14.1.1 Ծովափնյա ճահճացման և պոլիէթիլենային լողացող աղբի խտության համաթիվը
14.2 Մինչև 2020 թ. կայուն ձևով կառավարել և պահպանել ծովային և ափամերձ էկոհամակարգերը՝ խուսափելու զգալի բացասական ազդեցություններից, այդ թվում՝ մեծացնելով դրանց դիմակայունությունը. ձեռնարկել գործողություններ դրանց վերականգնման համար՝ հասնելու այն բանին, որ օվկիանոսները լինեն առողջ և արտադրողական	14.2.1 Էկոհամահարգային մոտեցումներով կառավարվող ազգային բացառիկ տնտեսական գոտիների համամասնությունը
14.3 Նվազագույնի հասցնել և դիմազրավել օվկիանոսների ջրի թթվայնացման ներգործությունը, այդ թվում՝ գիտական խորացված գործակցության միջոցով բոլոր մակարդակներում	14.3.1 Ծովի ջրի միջին թթվայնությունը (pH)՝ չափված ներկայացուցչական նմուշառման կայանների համաձայնեցված հավաքակազմում
14.4 Մինչև 2020 թ. արդյունավետ կերպով կարգավորել ձկնորսությունը և վերջ դնել ձկնային պաշարների սպառմանը, ապօրինի, չգրանցված և չկարգավորվող ձկնորսությանը և ձկնորսական կործանիչ գործելաձևերին և իրականացնել գիտահեն կառավարման պլաններ՝ հնարավորինս ամենակարճ ժամկետներում վերականգնելու ձկնային պաշարները՝ առնվազն մինչև այնպիսի մակարդակների, որպեսզի հնարավոր լինի ըստ իրենց կենսաբանական բնութագրերի առավելագույն, կայուն սերնդատվություն	14.4.1 Կենսաբանորեն կայուն մակարդակների սահմաններում գտնվող ձկնային պաշարների մասնաբաժինը
14.5 Մինչև 2020 թ. պահպանել ափամերձ և ծովային տարածքների առնվազն 10 տոկոսը՝ համահունչ ազգային և միջազգային օրենքներին և հիմնվելով լավագույն հասանելի գիտական տեղեկությունների վրա	14.5.1 Հատուկ պահպանվող տարածքների ծածկույթը ծովային տարածքների համեմատ

<p>14.6 Մինչև 2020 թ. արգելել ձկնարդյունաբերական տնտեսությունների սուբսիդիաների որոշ ձևեր, որոնք նպաստում են գերհզորությանը և ձկնային պաշարների սպառմանը, վերացնել սուբսիդիաները, որոնք նպաստում են ապօրինի, չգրանցված և չկարգավորվող ձկնորսությանը, և ձեռնպահ մնալ նույնպիսի նոր սուբսիդիաների ներդրումից՝ ճանաչելով, որ զարգացող և առավել թույլ զարգացած երկրների նկատմամբ պատշաճ և արդյունավետ, հատուկ և տարբերակված վերաբերմունքը պետք է լինի Առևտրի համաշխարհային կազմակերպության՝ ձկնարդյունաբերական տնտեսությունների սուբսիդիաների վերաբերյալ բանակցությունների անբաժանելի մասըⁱⁱⁱ</p>	<p>14.6.1 Անօրինական, չգրանցված և չկարգավորված ձկնորսության դեմ պայքարում երկրների միջազգային իրավական գործիքների օգտագործման առաջընթացի աստիճանը</p>
<p>14.7 Մինչև 2030 թ. մեծացնել ծովային ռեսուրսների կայուն օգտագործումից ստացվող տնտեսական օգուտները զարգացող փոքր կղզի-պետություններին և առավել թույլ զարգացած երկրներին, այդ թվում՝ ձկնային տնտեսությունների, ջրում կենդանիների և բույսերի բուծման (ակվակուլտուրա) և զբոսաշրջության կայուն կառավարման միջոցով</p>	<p>14.7.1 Կայուն ձկնաբուծական տնտեսությունները՝ որպես փոքր կղզի-պետությունների, թույլ զարգացած երկրների ու բոլոր երկրների ՀՆԱ-ի տոկոս</p>
<p>14.ա Ընդլայնել գիտական գիտելիքները, զարգացնել հետազոտական կարողությունները և փոխանցել ծովային տեխնոլոգիաները՝ հաշվի առնելով Օվկիանոսագրական միջկառավարական հանձնաժողովի չափանիշները և ուղեցույցները ծովային տեխնոլոգիաների փոխանցման վերաբերյալ՝ բարելավելու օվկիանոսների առողջությունը և խթանելու ծովային կենսաբազմազանության ավանդը զարգացող երկրների, մասնավորապես՝ զարգացող փոքր կղզի-պետությունների և առավել թույլ զարգացած երկրների զարգացման գործում</p>	<p>14.ա.1 Բյուջետային հատկացումները ծովային տեխնոլոգիաների հետազոտմանը՝ արտահայտված որպես հետազոտական աշխատանքներին հատկացված ընդհանուր բյուջեի համամասնություն</p>

ⁱⁱⁱ Հաշվի առնելով Առևտրի համաշխարհային կազմակերպության բանակցությունները, Դոհայի զարգացման օրակարգը և Հնոգ Կոնգի նախարարական հռչակագիրը:

<p>14.բ Ոչ ժամանակակից տեխնիկական միջոցներ ունեցող փոքրածավալ ձկնորսական տնտեսությունների համար հասանելի դարձնել ծովային պաշարները և շուկաները</p>	<p>14.բ.1 Երկրների առաջընթացը իրավական/կարգավորող/քաղաքականության/ինստիտուցիոնալ դաշտի իրականացման գործում, որը ճանաչում և պաշտպանում է փոքր ձկնորսական տնտեսությունների մուտքի իրավունքը</p>
<p>14.գ Ընդլայնել օվկիանոսների և դրանց ռեսուրսների պահպանումը և կայուն օգտագործումը՝ միջազգային օրենքի իրականացմամբ, ինչպես դա արտացոլված է Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայում, որը տրամադրում է օվկիանոսների և դրանց ռեսուրսների պահպանման և կայուն օգտագործման իրավական դաշտը՝ ինչպես նշված է «Ապագան, որը մենք ենք ուզում» բանաձևի 158-րդ պարբերությունում</p>	<p>14.գ.1 Համաձայն Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ օվկիանոսների և նրանց պաշարների պահպանության ու կայուն օգտագործման սկզբունքի միջազգային իրավունքի իրագործման միջոցով իրավական, քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակների, օվկիանոսների հետ առնչություն ունեցող իրավական գործիքների վավերացման, ընդունման ու կատարման մեջ առաջընթաց գրանցած երկրների թիվը</p>
<p>Նպատակ 15. Պահպանել, վերականգնել և խթանել ցամաքային էկոհամակարգերի կայուն օգտագործումը, ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեցնել և շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը</p>	
<p>15.1 Մինչև 2020 թ. ապահովել ցամաքային էկոհամակարգերի և ցամաքում քաղցրահամ ջրի էկոհամակարգերի և դրանց ծառայությունների պահպանումը, վերականգնումը և կայուն օգտագործումը, մասնավորապես անտառների, ջրաճահճային տարածքների, լեռների և չորային շրջանների՝ համաձայն միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների</p>	<p>15.1.1 Անտառածածկ տարածքները՝ արտահայտված որպես ընդհանուր հողային տարածքների տոկոս</p> <p>15.1.2. Ցամաքային և քաղցրահամ ջրի կենսաբազմազանության կարևոր տեղանքների համամասնությունը, որոնք ընդգրկված են պահպանվող տարածքներում՝ ըստ էկոհամակարգի տեսակի</p>
<p>15.2 Մինչև 2020 թ. խթանել բոլոր տեսակի անտառների կայուն կառավարման ներդրումը, կասեցնել անտառահատումները, վերականգնել դեգրադացված անտառները, էականորեն ավելացնել անտառապատման և անտառվերականգնման ծավալները ողջ աշխարհում</p>	<p>15.2.1 Անտառների կայուն կառավարման նկատմամբ առաջընթաց</p>

<p>15.3 Մինչև 2030 թ. պայքարել անապատացման դեմ, վերականգնել վատթարացած հողերը, այդ թվում՝ անապատացումից, երաշտից և հեղեղումներից վնասված հողերը, ձգտել հասնելու աշխարհում հողերի չեզոք վատթարացման վիճակի</p>	<p>15.3.1 Վատթարացած հողի համամասնությունը ընդհանուր հողային տարածքների նկատմամբ</p>
<p>15.4 Մինչև 2030 թ. ապահովել լեռնային էկոհամակարգերի, այդ թվում՝ դրանց կենսաբազմազանության պահպանումը՝ մեծացնելու կայուն զարգացման համար էական օգուտներ սրամադրելու դրանց կարողությունները</p>	<p>15.4.1 Լեռների կենսաբազմազանության համար կարևոր տարածքների ներառվածությունը բնության հատուկ պահպանվող տարածքներում 15.4.2 Լեռների կանաչ ծածկույթի համաթիվ</p>
<p>15.5 Ձեռնարկել հրատապ և նշանակալի գործողություններ՝ նվազեցնելու բնական ապրելավայրերի դեգրադացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը և մինչև 2020 թ. պաշտպանել վտանգված տեսակները և կանխել դրանց անհետացումը</p>	<p>15.5.1 Կարմիր ցուցակի համաթիվ</p>
<p>15.6 Խթանել գենետիկական պաշարների օգտագործումից ստացվող օգուտների արդարացի և հավասար բաշխումը, խթանել այդ պաշարների պատշաճ հասանելիություն՝ ըստ միջազգայնորեն համաձայնեցված կարգի</p>	<p>15.6.1 Երկրների թիվը, որոնք ընդունել են օրենսդրական, վարչական և ռազմավարական շրջանակներ ապահովելու շահույթի ազնիվ և արդարացի բաշխում</p>
<p>15.7 Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ վերջ դնելու պահպանվող բուսա- և կենդանատեսակների որսագողությանը և ապօրինի առևտրին ու անդրադառնալ վայրի բնության անօրինական ապրանքների թե՛ պահանջարկի, թե՛ առաջարկի հարցերին</p>	<p>15.7.1 Որսագողությամբ կամ ապօրինի ձևով վաճառված վայրի բնության նմուշների համամասնությունը</p>
<p>15.8 Մինչև 2020 թ. միջոցներ ձեռնարկել՝ կանխելու օտար ինվազիվ տեսակների ներմուծումը և զգալիորեն նվազեցնել դրանց ներգործությունը հողային և ջրային էկոհամակարգերի վրա, վերահսկել կամ վերացնել գերակա տեսակները</p>	<p>15.8.1 Օտար ինվազիվ տեսակների կանխման կամ վերահսկմանն առնչվող ազգային համապատասխան օրենսդրության ընդունման համամասնությունը</p>
<p>15.9 Մինչև 2020 թ. էկոհամակարգերի և կենսաբազմազանության արժեքները ինտեգրել ազգային և տեղական պլաններում, զարգացման գործընթացներում, աղքատության կրճատման ռազմավարություններում և հաշիվներում</p>	<p>15.9.1 2011-2020 թթ. Կենսաբազմազանության ռազմավարական ծրագրի Աիչի կենսաբազմազանության 2-րդ թիրախին համահունչ ստեղծված ազգային թիրախների առաջընթացը</p>

<p>15.ա Մոբիլիզացնել և զգալիորեն մեծացնել բոլոր աղբյուրներից եկող ֆինանսական միջոցները՝ կենսաբազմազանության և էկոհամակարգերի պահպանման և կայուն օգտագործման նպատակով</p>	<p>15.ա.1 Ջարգացմանն ուղղված պաշտոնական օգնություն և հանրային ծախսեր կենսաբազմազանության և էկոհամակարգերի պահպանման և կայուն օգտագործման համար</p>
<p>15.բ Մոբիլիզացնել զգալի միջոցներ բոլոր աղբյուրներից և բոլոր մակարդակներում՝ ֆինանսավորելու անտառների կայուն կառավարումը և համարժեք խրախուսման միջոցներ տրամադրելու զարգացող երկրներին կայուն կառավարումը զարգացնելու, այդ թվում՝ պահպանման և անտառվերականգնման համար</p>	<p>15.բ.1 Ջարգացմանն ուղղված պաշտոնական օգնություն և հանրային ծախսեր կենսաբազմազանության և էկոհամակարգերի պահպանման և կայուն օգտագործման համար</p>
<p>15.գ Խթանել որսագողության և պահպանվող տեսակների ապօրինի առևտրի դեմ պայքարի ջանքերին ցուցաբերվող համընդհանուր աջակցությունը, այդ թվում տեղական համայնքների՝ կայուն կենսամիջոցների հնարավորություններին հետամուտ լինելու կարողությունների մեծացման միջոցով</p>	<p>15.գ.1 Որսագողությամբ կամ ապօրինի ձևով վաճառված վայրի բնության նմուշների համամասնությունը</p>
<p>Նպատակ 16. Խթանել խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը՝ հանուն կայուն զարգացման, բոլորի համար հասանելի դարձնել արդարությունը, բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու և ներառական հաստատություններ</p>	
<p>16.1 Ջգալիորեն նվազեցնել բռնության բոլոր ձևերը և դրանց առնչվող մահերի ցուցանիշը</p>	<p>16.1.1 Դիտավորյալ սպանությունների զոհերի թիվը 100 հազար բնակչի հաշվով՝ ըստ սեռի և տարիքի</p> <p>16.1.2 Հակամարտություններին առնչվող մահերի թիվը 100 հազար բնակչի հաշվով՝ ըստ սեռի, տարիքի և պատճառի</p> <p>16.1.3 Ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական բնույթի բռնության ենթարկված բնակչության համամասնությունը նախորդ 12 ամիսների ընթացքում</p> <p>16.1.4 Իրենց բնակության տարածքում մենակ քայլելիս իրենց ապահով զգացող բնակչության համամասնությունը</p>

<p>16.2 Վերջ դնել երեխաների չարաշահմանը, շահագործմանը, թրաֆիքինգին, նրանց դեմ գործադրվող բոլոր տեսակի բռնություններին և խոշտանգումներին</p>	<p>16.2.1 1-17 տարեկան երեխաների համամասնությունը, ովքեր անցյալ ամսում ինամատարների կողմից ենթարկվել են որևէ ֆիզիկական պատժի և (կամ) հոգեբանական ագրեսիայի</p> <p>16.2.2 Մարդկանց թրաֆիքինգի զոհերի թիվը 100 հազար բնակչի հաշվով՝ ըստ սեռի, տարիքի և շահագործման ձևի</p> <p>16.2.3 18-24 տարեկան երիտասարդ կանանց և տղամարդկանց համամասնությունը, ովքեր մինչև 18 տարեկանը ենթարկվել են սեռական բռնության</p>
<p>16.3 Խթանել օրենքի գերակայությունը ազգային և միջազգային մակարդակներում և ապահովել արդարադատության հավասար հասանելիություն բոլորի համար</p>	<p>16.3.1 Բռնության զոհերի համամասնությունը նախորդ 12 ամիսներին, ովքեր իրենց բռնության ենթարկվելու մասին հաղորդել են իրավասու մարմիններին կամ կոնֆլիկտների լուծման այլ պաշտոնապետ ճանաչված մեխանիզմների (անվանվում է նաև հանցագործությունների հաղորդման ցուցանիշ)</p> <p>16.3.2 Դատավճիռ չստացած ազատագրվածները՝ արտահայտված որպես բանտարկյալների ընդհանուր թվի տոկոս</p>
<p>16.4 Մինչև 2030 թ. զգալիորեն կրճատել ֆինանսների և զենքերի ապօրինի հոսքերը, ուժեղացնել գողացված գույքը հետ վերցնելու և վերադարձնելու գործողությունները և պայքարել կազմակերպված հանցավորության բոլոր ձևերի դեմ</p>	<p>16.4.1 Ապօրինի մուտքային և ելքային ֆինանսական հոսքերի ընդհանուր արժեքը (ԱՄՆ դոլարով)</p> <p>16.4.2 Բռնագրավված փոքր և թեթև զինատեսակների համամասնությունը, որոնք գրանցված են և հետագծվում են՝ համաձայն միջազգային չափորոշիչների և իրավական փաստաթղթերի</p>
<p>16.5 Էապես կրճատել կոռուպցիան և կաշառակերությունը իրենց բոլոր ձևերով</p>	<p>16.5.1 Պետական պաշտոնյայի հետ առնվազն մեկ անգամ շփում ունեցած անձանց համամասնությունը, ովքեր կաշառք են տվել պետական պաշտոնյային, կամ այդ պետական պաշտոնյաները նրանցից կաշառք են պահանջել նախորդ 12 ամսում</p> <p>16.5.2. Պետական պաշտոնյայի հետ առնվազն մեկ անգամ շփում ունեցած բիզնեսների համամասնությունը, որոնք կաշառք են տվել պետական պաշտոնյային, կամ այդ պետական պաշտոնյաները նրանցից կաշառք են պահանջել նախորդ 12 ամսում</p>

<p>16.6 Զարգացնել արդյունավետ, հաշվետու և թափանցիկ հաստատություններ բոլոր մակարդակներում</p>	<p>16.6.1 Պետական առաջնային ծախսերը որպես սկզբնական հաստատված բյուջեի տոկոս՝ տարանջատված ըստ ոլորտի (կամ ըստ բյուջեի կոդերի և այլն)</p> <p>16.6.2 Հանրային ծառայություններից վերջին անգամ օգտվելիս բավարարված բնակչության մասնաբաժինը</p>
<p>16.7 Ապահովել որոշումների կայացման արձագանքող, ներառական, մասնակցային և ներկայացուցչական գործընթաց բոլոր մակարդակներում</p>	<p>16.7.1 Պաշտոնների համամասնությունը (ըստ սեռի, տարիքի, հաշմանդամություն ունենալու հանգամանքի և բնակչության խմբի) պետական հաստատություններում (ազգային և տեղական օրենսդիր մարմիններ, հանրային ծառայություններ և դատական մարմիններ)՝ համեմատած ազգային բաշխվածությանը</p> <p>16.7.2 Որոշումների կայացման գործընթացի ներառականությանն ու զգայունությանը հավատացող բնակչության համամասնությունը՝ ըստ սեռի, տարիքի, հաշմանդամություն ունենալու և բնակչության խմբի</p>
<p>16.8 Ընդլայնել և ուժեղացնել զարգացող երկրների մասնակցությունը գլոբալ կառավարմամբ հաստատություններին</p>	<p>16.8.1 Միջազգային կազմակերպություններում զարգացող երկրներից անդամների և նրանց քվեարկելու իրավունքի համամասնությունը</p>
<p>16.9 Մինչև 2030 թ. բոլորին տրամադրել իրավաբանական ինքնություն, այդ թվում՝ ծննդի գրանցում</p>	<p>16.9.1 Մինչև 5 տարեկան երեխաների համամասնությունը, որոնց ծնունդը գրանցվել է քաղաքացիական մարմնի կողմից ըստ սեռի</p>
<p>16.10 Ապահովել տեղեկատվության հանրային հասանելիությունը և պաշտպանել հիմնարար ազատությունները՝ համաձայն ազգային օրենսդրության և միջազգային համաձայնագրերի</p>	<p>16.10.1 Լրագրողների, ՉԼՄ-ների անձնակազմի, արհմիությունների անդամների և իրավապաշտպանների սպանությունների, առևանգման, հարկադրյալ անհետացման, կամայական ազատազրկման և խոշտանգումների ճշգրտված թիվը նախորդ 12 ամսում</p> <p>16.10.2. Հանուն տեղեկատվության հանրային մատչելիության սահմանադրական, կանոնադրական և/կամ քաղաքականության երաշխիքներ որդեգրող և իրագործող երկրների թիվը</p>

<p>16.ա Ուժեղացնել բոլոր մակարդակների համապատասխան ազգային հաստատությունները, այդ թվում և միջազգային գործակցության միջոցով, զարգացնելու՝ բնությունները կանխելու և ահաբեկչության ու հանցավորության դեմ պայքարելու կարողությունները մասնավորապես զարգացող երկրներում</p>	<p>16.ա.1 Փարիզյան սկզբունքներին համահունչ ազգային անկախ իրավապաշտպան ինստիտուտների գոյությունը</p>
<p>16.բ Խթանել և կիրարկել ոչ խտրական օրենքներ և քաղաքականություններ՝ հանուն կայուն զարգացման</p>	<p>16.բ.1 Բնակչության համամասնությունը, որը հաղորդել է, որ նախորդ 12 ամսվա ընթացքում անձամբ իր նկատմամբ զգացել է խտրականություն կամ ենթարկվել է ոտնձգությունների, որոնք արգելվում են՝ համաձայն մարդու իրավունքների միջազգային իրավունքի</p>
<p>Նպատակ 17. Ուժեղացնել կայուն զարգացման իրագործման միջոցները և ակտիվացնել գլոբալ գործընկերությունը հանուն այս նպատակի</p>	
<p>Ֆինանսներ</p>	
<p>17.1 Ուժեղացնել ներքին ռեսուրսների մոբիլիզացումը, այդ թվում՝ զարգացող երկրներին ցուցաբերվող միջազգային աջակցության միջոցով՝ բարելավելու հարկերի և այլ եկամուտների հավաքագրումը</p>	<p>17.1.1 Պետական ընդհանուր եկամուտները (ըստ աղբյուրի)՝ արտահայտված որպես ՀՆԱ-ի համամասնությունը՝ ըստ աղբյուրի</p> <p>17.1.2 Ներքին հարկերից ձևավորվող ներքին բյուջեի համամասնությունը</p>
<p>17.2 Չարգացած երկրները պետք է լիարժեք կերպով կատարեն զարգացմանը պաշտոնական աջակցության իրենց հանձնառությունները, այդ թվում՝ բազմաթիվ զարգացած երկրների հանձնառությունը՝ հասնելու զարգացող երկրներին, որպես իրենց համախառն ներքին եկամտի (ՀՆԵ) 0,7 տոկոսի չափով զարգացմանն ուղղված պաշտոնական օգնություն (ODA/ԶՊՕ) տրամադրելու թիրախին, իսկ առավել թույլ զարգացած երկրներին՝ 0,15-0,20 տոկոս. խրախուսվում է, որ ԶՊՕ տրամադրողները սահմանեն թիրախ՝ առավել թույլ զարգացած երկրներին տրամադրելու առնվազն 0,20 տոկոս</p>	<p>17.2.1 Չարգացմանն ուղղված պաշտոնական օգնության գուտ թիվը և առավել թույլ զարգացած երկրներին՝ որպես ՏՀԶԿ/Չարգացման աջակցման կոմիտեի դոնորների համախառն ազգային եկամտի համամասնությունը</p>

<p>17.3 Սոբիլիդացնել բազմաթիվ աղբյուրներից լրացուցիչ ֆինանսական միջոցներ զարգացող երկրների համար՝</p>	<p>17.3.1 Արտաքին ուղղակի ներդրումները (ԱՌՆ), զարգացմանն ուղղված պաշտոնական օժանդակությունը և Հարավ-հարավ համագործակցությունը՝ որպես ընդհանուր ներքին բյուջեի համամասնություն</p> <p>17.3.2 Դրամական փոխանցումների ծավալը (ԱՄՆ դոլարով) արտահայտված որպես ընդհանուր ՀՆԱ-ի համամասնություն</p>
<p>17.4 Աջակցել զարգացող երկրներին ձեռք բերելու երկարաժամկետ պարտքերի կայունություն՝ ըստ անհրաժեշտության պարտքերի ֆինանսավորմանը, պարտքերի բեռի թեթևացմանը և պարտքերի վերակազմակերպմանը նպաստող համակարգված քաղաքականությունների միջոցով, անդրադառնալ մեծ պարտքեր ունեցող աղքատ երկրների արտաքին պարտքերին՝ մեղմելու պարտքերի առաջացրած դառնությունը</p>	<p>17.4.1 Պարտքի սպասարկումը՝ արտահայտված որպես ապրանքների և ծառայությունների արտահանումների տոկոս</p>
<p>17.5 Ընդունել և իրականացնել ներդրումների խթանման ռեժիմներ առավել թույլ զարգացած երկրների համար</p>	<p>17.5.1 Թույլ զարգացած երկրների համար ներդրումների խթանման ռեժիմ որդեգրած և իրականացնող երկրների թիվը</p>
<p>Տեխնոլոգիա</p>	
<p>17.6 Խորացնել Հյուսիս-Հարավ, Հարավ-Հարավ և «Էռանկյունաձև» տարածաշրջանային և միջազգային գործակցություն գիտության, տեխնոլոգիաների և նորարարության վերաբերյալ, ընդլայնել գիտելիքների փոխանակումը փոխհամաձայնեցված պայմաններով, այդ թվում՝ գործող մեխանիզմների միջև համակարգումը բարելավելու միջոցով, մասնավորապես՝ ՄԱԿ-ի մակարդակում, ինչպես նաև տեխնոլոգիաների դյուրացման գլոբալ մեխանիզմի միջոցով</p>	<p>17.6.1 Երկրների միջև գիտության և/կամ տեխնոլոգիական համագործակցության համաձայնագրեր և ծրագրեր՝ ըստ համագործակցության տեսակի</p> <p>17.6.2 Ֆիքսված կապի և լայնաշերտ համացանցի բաժանորդագրությունները 100 բնակչի հաշվով՝ ըստ արագության</p>

<p>17.7 Զարգացող երկրներում նպաստավոր պայմաններով խթանել բնապահպանորեն անվտանգ տեխնոլոգիաների զարգացումը, փոխանցումը, տարածումն ու ծավալումը, այդ թվում՝ արտոնյալ և գերադասելի պայմաններով՝ ըստ փոխհամաձայնության</p>	<p>17.7.1 Հաստատված ֆինանսավորման ընդհանուր գումարը զարգացող երկրների համար՝ խթանելու բնապահպանորեն անվտանգ տեխնոլոգիաների զարգացումը, փոխանցումը, տարածումն ու ծավալումը</p>
<p>17.8 Լիարժեք կերպով գործարկել տեխնոլոգիական «բանկը» և գիտության, տեխնոլոգիաների ու նորարարության կարողությունների զարգացման մեխանիզմը առավել թույլ զարգացած երկրների համար մինչև 2017 թ. և ընդլայնել բարձրարդյունավետ, մասնավորապես՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործումը</p>	<p>17.8.1 Համացանցից օգտվող անհատների մասնաբաժինը</p>
<p>Կարողությունների զարգացում</p>	
<p>17.9 Ընդլայնել միջազգային օժանդակությունը՝ զարգացող երկրներում արդյունավետ և հասցեական կարողությունների զարգացում իրականացնելու, աջակցելու ազգային պլանների կողմից Կայուն զարգացման նպատակների իրագործմանը, այդ թվում՝ հյուսիս-հարավ, հարավ-հարավ և «եռանկյունաձև» գործակցության միջոցով</p>	<p>17.9.1 Ֆինանսական և փորձագիտական օժանդակության դոլարային արժեքը, (ներառյալ հյուսիս-հարավ, հարավ-հարավ և «եռանկյունաձև» գործակցության միջոցով), որն ուղղված է զարգացող երկրներին</p>
<p>Առևտուր</p>	
<p>17.10 Խթանել համընդհանուր, կանոնահեն, բաց, ոչ-խտրական և արդարացի բազմակողմ առևտրային համակարգի ստեղծում Առևտրի համաշխարհային կազմակերպության ներքո, այդ թվում՝ Դոհայի զարգացման օրակարգի բանակցությունների եզրահանգման միջոցով</p>	<p>17.10.1 Ամբողջ աշխարհում արժևորված միջին սակագին</p>
<p>17.11 Զգալիորեն ավելացնել զարգացող երկրների արտահանումները, մասնավորապես նպատակ ունենալով մինչև 2020 թ. կրկնապատկել առավել թույլ զարգացած երկրների գլոբալ արտահանումների բաժնեմասը</p>	<p>17.11.1 Զարգացող երկրների և առավել թույլ զարգացած երկրների գլոբալ արտահանումների բաժնեմասը</p>

<p>17.12 Տեսական ժամկետով մուտք ապահովել դեպի անմաքս և անքվոտա շուկա բոլոր առավել թույլ զարգացած երկրներին ըստ Առևտրի համաշխարհային կազմակերպության որոշումների, այդ թվում՝ ապահովելով, որ առավել թույլ զարգացած երկրներից ներկրումների նկատմամբ կիրառելի գերադասվող կանոնները լինեն թափանցիկ ու պարզ, և նպաստեն շուկայի մուտքի դյուրացմանը</p>	<p>17.12.1 Միջին սակագները, որոնց հետ գործ են ունենում զարգացող երկրները, առավել թույլ զարգացած երկրները և զարգացող փոքր կղզի-պետությունները</p>
<p>Համակարգային հարցեր</p>	
<p><i>Քաղաքականության և ինստիտուցիոնալ փոխշաղկապվածություն</i></p>	
<p>17.13 Մեծացնել գլոբալ մակրոտնտեսական կայունությունը, այդ թվում՝ քաղաքականության համակարգման և քաղաքականության փոխշաղկապվածության միջոցով</p>	<p>17.13.1 Մակրոտնտեսական կառավարման վահանակ</p>
<p>17.14 Ընդլայնել քաղաքականության փոխշաղկապվածությունը հանուն կայուն զարգացման</p>	<p>17.14.1 Երկրների թիվը, որոնք ունեն կայուն զարգացման քաղաքականության տրամաբանությունը բարձրացնող գործող մեխանիզմներ</p>
<p>17.15 Հարգել յուրաքանչյուր երկրի քաղաքականությունների դաշտը և առաջնորդությունը՝ հաստատելու և իրագործելու աղքատության վերացմանն ու կայուն զարգացման ապահովմանն ուղղված ռազմավարություն</p>	<p>17.15.1 Ջարգացման համագործակցություն մատակարարողների կողմից երկրում առկա արդյունքների շրջանակների եւ պլանավորման գործիքների օգտագործման չափը</p>
<p><i>Գործընկերություն բազմաթիվ շահագրգիռ կողմերի միջև</i></p>	
<p>17.16 Խորացնել գլոբալ գործընկերությունը հանուն կայուն զարգացման, լրացված բազմաթիվ շահագրգիռ կողմերի միջև գործընկերությամբ, որոնք մոբիլիզացնում և փոխանակում են գիտելիքներ, փորձագիտություն, տեխնոլոգիաներ և ֆինանսական միջոցներ՝ սատարելու Կայուն զարգացման նպատակների իրագործմանը բոլոր, մասնավորապես՝ զարգացող երկրներում</p>	<p>17.16.1 Ջարգացման արդյունավետության մշտադիտարկման շրջանակներում բազմակողմ շահագրգռություն ունեցող առաջընթաց արձանագրած երկրների թիվը, որոնք աջակցում են հասնելու կայուն զարգացման նպատակներին</p>

<p>17.17 Խրախուսել և խթանել արդյունավետ պետական, պետական-մասնավոր և քաղաքացիական հասարակության գործընկերություններ՝ հիմնվելով վերջիններիս փորձառության և ռեսուրսային ռազմավարությունների վրա</p>	<p>17.17.1 Պետական-մասնավոր և քաղաքացիական հասարակության գործընկերություններին տրամադրված գումարը ԱՄՆ դոլարով</p>
<p><i>Տվյալներ, մշտադիտարկում (մոնիթորինգ) և հաշվետվողականություն</i></p>	
<p>17.18 Մինչև 2020 թ. մեծացնել կարողությունների զարգացմանն ուղղված օժանդակությունը զարգացող երկրներին, այդ թվում՝ առավել թույլ զարգացած երկրներին և զարգացող փոքր կղզի-պետություններին՝ զգալիորեն ավելացնելու բարձրորակ, ժամանակին և հուսալի տվյալների առկայությունը՝ տարանջատված ըստ եկամտի, սեռի, տարիքի, ռասայի, էթնիկ ծագման, միգրացիոն կարգավիճակի, հաշմանդամություն ունենալու հանգամանքի, աշխարհագրական դիրքի և ազգային համատեքստին վերաբերելի այլ բնութագրերի</p>	<p>17.18.1 Ազգային մակարդակում «Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներ»-ի համաձայն մշակված կայուն զարգացման ցուցանիշների համամասնությունը լիարժեք տարանջատումներով այն դեպքում, երբ համապատասխանում է թիրախին</p> <p>17.18.2 Երկրների թիվը, որոնք ունեն վիճակագրության վերաբերյալ ազգային օրենսդրություն «Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներ»-ին համահունչ</p> <p>17.18.3. Ազգային վիճակագրական ծրագիր ունեցող երկրների թիվը, որն ամբողջությամբ ֆինանսավորվում ու իրագործվում է՝ ըստ ֆինանսավորման աղբյուրի</p>
<p>17.19 Մինչև 2030 թ. գոյություն ունեցող նախաձեռնությունների հիման վրա մշակել կայուն զարգացման ոլորտում գրանցված առաջընթացի չափումներ, որոնք լրացնում են համախառն ներքին արդյունքը, և օժանդակել զարգացող երկրներում վիճակագրական կարողությունների զարգացմանը</p>	<p>17.19.1. Չարգացող երկրներում վիճակագրական կարողությունների հզորացման համար առկա բոլոր ռեսուրսների դոլարային արժեքը</p> <p>17.19.2 Երկրների համամասնությունը, որ (ա) վերջին 10 տարիների ընթացքում անցկացրել է առնվազն մեկ բնակչության և մեկ տնային մարդահամար, և (բ) հասել է ծնունդների գրանցման 100 և մահվան դեպքերի գրանցման 80 տոկոսին</p>

Լուսակնի Էջը



**ПРЕОБРАЗОВАНИЕ НАШЕГО МИРА:
ПОВЕСТКА ДНЯ
В ОБЛАСТИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ
НА ПЕРИОД ДО 2030 ГОДА**



**ЕРЕВАН
2016**



Работа выполнена в рамках программы

«Укрепление экологического управления с помощью

развития потенциала неправительственных организаций» в ходе проекта

«Формирование возможностей для диалога между правительственными структурами и неправительственным сектором в рамках процесса "PostRio+20" в Армении», которая

финансируется Европейским Союзом, реализуется Программой Развития ООН

в рамках Программы Малых Грантов Глобального Экологического Фонда.

Исполнитель проекта – Ассоциация «За устойчивое человеческое развитие»/UNEPNatCom

выражает благодарность спонсорам за оказанную поддержку.



ПРЕДИСЛОВИЕ

Ассоциация «За устойчивое человеческое развитие»/Национальный комитет ЮНЕП активно участвует в процессе перехода современной цивилизации к устойчивому развитию на всех уровнях – локальном, национальном, глобальном.

Особое значение мы придаем повышению осведомленности населения и в особенности лиц, принимающих решения, об идеологии и принципах устойчивого развития и о насущной необходимости продвижения по пути к устойчивому развитию.

В этих целях в рамках Десятилетия ООН «Образование в интересах устойчивого развития» Ассоциацией были подготовлены и изданы три учебных пособия для вуз-ов – в 1996г., в 2006г. и в 2013г., в которых в значительной мере отражены основные заключительные документы Саммита ООН «Планета Земля» 1992г., Саммита по устойчивому развитию «Рио+10» в Йоганнесбурге 2002г., и Саммита по устойчивому развитию «Рио+20» в Рио-де-Жанейро 2012г. Многие из этих документов изданы нами также отдельными публикациями и широко распространены.

Мы считаем исключительно важным факт принятия 25 сентября 2015г. 70-й юбилейной сессией Генеральной Ассамблеи ООН Резолюции о всемирной программе «Преобразование нашего мира: Повестка дня в области устойчивого развития на период до 2030 года», содержащей основополагающие цели и задачи устойчивого развития. Учитывая, что в настоящее время все страны, включая Республику Армения, должны приступить к имплементации и реализации этих целей, мы полагаем, что публикация данного документа на наиболее доступных для населения языках (полный текст на русском и цели, задачи и индикаторы устойчивого развития в переводе на армянский) будет содействовать более успешному осуществлению данного процесса.

КАРИНЕ ДАНИЕЛЯН,
Председатель Ассоциации «За УЧР»/UNEPCom,
секретарь НСУР РА, зав. Кафедрой экологии
и устойчивого развития АСПУ, докт. геогр. наук, проф.

Ассоциация благодарит EU/GEFuUNDP за финансовую поддержку данного издания, а также UNDPi за предоставление текста на армянском языке.



Генеральная Ассамблея

Distr.: General
21 October 2015

Семидесятая сессия

Пункты 15 и 116 повестки дня

Резолюция, принятая Генеральной Ассамблеей 25 сентября 2015 года

[без передачи в главные комитеты (A/70/L.1)]

70/1. Преобразование нашего мира: Повестка дня в области устойчивого развития на период до 2030 года

Генеральная Ассамблея
принимает следующий итоговый документ саммита Организации
Объединенных
Наций по принятию повестки дня в области развития на период после
2015 года:

Преобразование нашего мира: Повестка дня в области устойчивого развития на период до 2030 года

Преамбула

Настоящая Повестка дня – это план действий для людей, планеты и процветания. Она также направлена на укрепление всеобщего мира в условиях большей свободы. Мы признаем, что ликвидация нищеты во всех ее формах и проявлениях, включая крайнюю нищету, является важнейшей глобальной задачей и одним из необходимых условий устойчивого развития.

Этот план будет осуществляться всеми странами и всеми заинтересованными сторонами, действующими в совместном партнерстве. Мы преисполнены решимости избавить человечество от тирании нищеты и нужды и исцелить и обезопасить нашу планету. Мы полны решимости предпринять смелые реформаторские шаги, которые настоятельно необходимы для того, чтобы вывести мир на траекторию устойчивого и жизнестойкого развития. Отправляясь в этот совместный путь, мы обещаем, что никто не будет забыт.

Семнадцать целей в области устойчивого развития и 169 задач, которые мы объявляем сегодня, свидетельствуют о масштабности и амбициозности этой новой всеобщей повестки дня. Они предусматривают продолжение работы, начатой в период действия целей в области развития, сформулированных в Декларации тысячелетия, и окончательное достижение тех целей, которых не удалось достичь. Они предусматривают реализацию

прав человека для всех и обеспечение гендерного равенства и расширение прав и возможностей всех женщин и девочек. Они носят комплексный и неделимый характер и обеспечивают сбалансированность всех трех компонентов устойчивого развития: экономического, социального и экологического. Эти цели и задачи будут стимулировать в ближайшие 15 лет деятельность в областях, имеющих огромное значение для человечества и планеты.

Люди

Мы преисполнены решимости положить конец нищете и голоду во всех их формах и проявлениях и обеспечить, чтобы все люди могли реализовать свой потенциал в условиях достоинства и равенства и в здоровой окружающей среде.

Планета

Мы преисполнены решимости уберечь планету от деградации, в том числе посредством внедрения рациональных моделей потребления и производства, рационального использования ее природных ресурсов и принятия неотложных мер в связи с изменением климата, с тем чтобы планета могла обеспечивать удовлетворение потребностей нынешнего и будущих поколений.

Процветание

Мы преисполнены решимости обеспечить, чтобы все люди могли жить в условиях процветания и благополучия и чтобы экономический, социальный и технический прогресс продолжался в гармонии с природой.

Мир

Мы преисполнены решимости способствовать построению миролюбивого, справедливого и свободного от социальных барьеров общества, в котором нет места страху и насилию. Не может быть устойчивого развития без мира и мира без устойчивого развития.

Партнерство

